Ի շխող ուժը հաղթանակի հույս կարող է ունենալ միայն ընտրություններում ցածր մասնակցության պայմաններում, քանի որ այդ ուժի ամբարտավան խոսելաոճին ու ապիկար գործելաոճին հավանություն տվող մի քանի տոկոս հանրությունը կկարողանա իր ճաշակը պարտադրել մեծամասնությանը, եթե մեծամասնությունը չգնա ընտրատեղամաս:

Կարդացեք՝ էջ 5

Մենք Վրաստանում դա տեսել ենք, դրա միջով անցել ենք, Սահակաշվիլուց ինչպես ժողովուրդն ու երկիրը տուժեցին: Եթե Հայաստանից եկող զբոսաշրջիկներին թվում է, թե մենք շատ լավ ենք ապրում, միայն թվում է, մենք գիտենք, թե ինչ հետեւանքներ ունեցավ Սահակաշվիլու վարած քաղաքականությունը, ոչ թե ներկա իշխանությունների:

Կարդացեք՝ էջ 6

Սրտիկ սիմվոլը հասուն մարդուն բնորոշ քայլ չէ, փաստում է մարդու մակերեսայնության մասին: Սրտիկի տակ գրված «խաղաղությունը» կապ չունի իրական խաղաղության հետ, անամպ երկինքը՝ Հայաստանի երկնքի հետ: Սիրտը սովորաբար սիրո սիմվոլիկա է, բայց այն ատելության մթնոլորտը, որ այժմ տիրում է Հայաստանում, աննախադեպ է:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 62 (4197), 16 ապրիլ, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Երեկ ՔՊ-ականները, վստահաբար, մեկ կենտրոնից ստացած հրահանգով կատաղի արշավ իրականացրին նախորդ օրը բերման ենթարկված «Ուժեղ Հայաստան» կուսակցության երկու կանանց դեմ, որպեսզի հնարավորինս վարկաբեկեն նրանց եւ Սամվել Կարապետյանի հիմնադրած ուժը ներկայացնեն իբրեւ ընտրակաշառք բաժանող: Լայվեր ու գրառումներ էին անում, ԱԺ ամբիոնից հայտարարություններ հնչեցնում: Եվ չնայած ընդդիմադիր կանանց փաստաբանները հայտարարում են, որ շինծու վարույթ է, սակայն տեղեկություններ կան, որ իշխանությունը միտումնավոր նման աղմուկ բարձրացրեց եւ առաջիկայում էլ պատրաստվում է կրկնել դա, որ կարողանա հիմքեր ստեղծել «Ուժեղ Հայաստանին» չգրանցելու համար: Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածն արգելում է նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաեւ քվեարկության նախորդ եւ քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին... խոստանալ դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել-խոստանալ ծառայություններ: Ընտրական օրենսգիրքը հստակ ընթացակարգ է սահմանել, որ ընտրակաշառքի մասին հաղորդումների դեպքում ԿԸՀ-ն կարող է դիմել դատարան՝ տվյալ կուսակցության գրանցումը մերժելու համար: Ուստի որոշել են աղմուկն ապահովել, որ Փաշինյանի կամակատար Վահագն Հովակիմյանը դատարան դիմելու հիմքեր ունենա:



Ժողովրդավարության, օրինականության ինքնահռչակ քերթողահայր Նիկոլ Փաշինյանը երեկ խորհրդարանում հերթական անգամ օրենք խախտեց՝ այն ստորադասելով նախընտրական քարոզչության իր փիառին: ԱԺ խոսնակ Ալեն Սիմոնյանի նախագահությամբ Փաշինյանը թիվ մեկ օրենսդիր ամբիոնից գերազանցեց ԱԺ կանոնակարգ օրենքով հատկացված ժամանակը, որը սահմանված է կառավարության ծրագրի կատարողականի զեկույցը ներկայացնելու համար: ԱԺ կանոնակարգ օրենքի 127-րդ հոդվածով այդ զեկույցի համար հատկացված է մեկ ժամ, Փաշինյանը դա գերազանցեց եւս կես ժամով: Ավելին, նա նաեւ ընդմիջման համար հատկացված 30 րոպեն օգտագործեց իր նախընտրական ելույթի համար՝ արհամարհելով խորհրդարանի դերն ու կարգավիճակը: Իսկ կոճակ սեղմող ուսապարկերից որեւէ մեկը չհանդգնեց ըմբոստանալ եւ շեֆին բերել օրինականության դաշտ, ճիշտ հակառակը՝ քծնական ժպիտով փորձում էին ցույց տալ, թե ինչքան են կարեւորում Փաշինյանի ելույթը:

Ինչ օրենք ու արդարություն

Մենք այնքան երկար ենք ապրել պոռոտախոսության, գործի ու խոսքի հակադրության մթնոլորտում, որ հաճախ չենք էլ զգում, թե ինչքան շատ ցինիզմ, անդաստիարակություն, ոչ պրոֆեսիոնալիզմ ու կեղծիք կա այս իշխանությունների խոսույթում: Ահա՝ կարդում եմ կառավարությունից ստացված հաղորդագրությունը «Հայաստան-ԵՄ քաղհասարակության պլատֆորմի 8-րդ հանդիպման» մասին, որի ժամանակ Նիկոլ Փաշինյանն ասել է, որ 2018-ի «ժողովրդական, ոչ բռնի, թավշյա հեղափոխությունից» հետո մեծ առաջընթաց ենք գրանցել ժողովրդավարության, տնտեսության զարգացման հարցերում, բայց արդարության եւ արդարադատության հարցում դեռ խնդիրներ կան, քանի որ արդարություն ապահովող ինստիտուտների եւ «իշխանության աղբյուրի»՝ ժողովրդի միջեւ խզում կա: Ապա սահուն անցում է կատարել, թե խզում կա նաեւ Սահմանադրության եւ ժողովրդի միջեւ: «Արդարության եւ արդարադատության զգացողությունը չի լինելու, որովհետեւ Սահմանադրությունը պետք է լինի ժողովրդի ազատ կամքի արտահայտում, իսկ մենք պետք է խոստովանենք, որ այդպիսի Սահմանադրություն չունենք»: Պարզ է, որ փորձում է նոր Սահմանադրության համար ճանապարհ հարթել: Բայց ինչպե՞ս կարող է երկրում արդարություն լինել, երբ քո անձնական հրահանգով մարդիկ են կալանավորվում, քո՝ ոչ մի հանցանք չգործած քաղաքական հակառակորդներին են ձերբակալում: Իսկ երբ փորձում ես կաթողիկոս «փոխել»՝ չի ստացվում, հրահանգում ես իրավապահ համակարգին՝ քրեական հետապնդումներ սկսել Մայր Աթոռի հոգեւորականների նկատմամբ: Ինչպե՞ս կարող է Սահմանադրություն գործել մի երկրում, որտեղ իշխող ՔՊ-ն իր նախընտրական ծրագրում բացահայտ հակասահմանադրական դրույթ է գրում՝ փոխել եկեղեցու ղեկավարին: Իսկ ժողովրդավարության հաղթանակն էլ երեւի տեռորով ու շանտաժով վերարտադրվելը կլինի:

2025թ. հոկտեմբերի 25-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հանրային խորհրդի անդամների հետ այցելել էր Կիրանց: Երեւանից ժամանածները ծանոթացել էին նաեւ Կիրանցի Սուրբ Երրորդություն եկեղեցու վերականգնման աշխատանքներին, որի համար պետբյուջեից հատկացվել է 55 միլիոն դրամ գումար: Այդ ժամանակ հայտարարվեց, որ եկեղեցու վերականգնման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2025 թ. դեկտեմբերին: Իսկ դեկտեմբերի 6-ին Փաշինյանը կրկին Կիրանց էր մեկնել՝ քաղաքացիների 50 հոգանոց խումբ էր էքսկուրսիա տարել, նաեւ ծանոթացրել եկեղեցու վերականգնման աշխատանքներին: Իր ֆեյսբուքյան էջում էլ տեսանյութ էր տեղադրել, որտեղ Փաշինյանը բառացիորեն ասում է. «Գարնանը, Սուրբ Զատիկի առիթով երեւի արդեն պատրաստ կլինի»: Զատիկն էլ անցավ, բայց եկեղեցին պատրաստ չէ: Ապրիլի 14-ին եղանք Կիրանցում՝ Սուրբ Երրորդություն եկեղեցու դռները կողպված էին, եկեղեցու վերաօծումն էլ դեռ չի կատարվել:

«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ»-Ը ԲԱՆԱԿՑՈՒՄ Է

Մեր տեղեկություններով, «Բոլորին դեմ եմ» շարժման համահիմնադիրներն այս օրերին բանակցում են տարբեր քաղաքական ուժերի ղեկավարների, անհատ գործիչների հետ՝ միասնական ճակատով ընտրություններին մասնակցելու նպատակով: Մասնավորապես, բանակցություններ կան «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության նախագահ Դավիթ Սանասարյանի հետ: Նա 2018 թվականի իշխանափոխության ակտիվ մասնակիցներից էր, Փաշինյանի թիվ մեկ գործընկերը, որին նշանակեցին Պետական վերահսկողական ծառայության ղեկավար, ապա ամիսներ անց կոռուպցիոն մեղադրանքով դուրս մղեցին իշխանությունից, իսկ 7 տարի անց դատարանն արդարացրեց նրան: Սանասարյանը տեւական ժամանակ քաղաքական ակտիվություն չէր դրսեւորում, եւ առաջիկա օրերին պարզ կլինի՝ հաջողվե՞լ է կոնսենսուսի գալ, թե՞ ոչ: Բանակցություններ կան նաեւ ՄԱՍ կուսակցության համահիմնադիր Հովիկ Աղազարյանի եւ Հակոբ Ասլանյանի հետ: Այս թեւում էլ դեռ որոշակիություն չկա: Հիշեցնենք. մեկ շաբաթ առաջ իրավապաշտպան Նինա Կարապետյանցը հայտարարեց, որ իր հիմնադրած «Նժար» շարժումը միանում է «Բոլորին դեմ եմ»-ին, եւ միասին են մասնակցելու հունիսյան ընտրություններին: «Բոլորին դեմ եմ»-ին է միացել նաեւ Տիգրան Խզմալյանը:

ՓԱՐԻԶ

ԿՈՉ ԱՐԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԵՐԻՆ՝ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԳԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՔՎԵԱՐԿԵԼ

Փարիզում ապրիլի 11-ին տեղի ունեցավ Սփյուռքի զորաշարժի համաժողովը, որը տեւեց երկու օր: Համաժողովին մասնակցելու էր ժամանել 150 հայ՝ աշխարհի 25 երկրից, այդ թվում՝ Արգենտինայից, Կանադայից, Միացյալ Նահանգներից, Իրանից, Լիբանանից եւ Հայաստանից: Համաժողովի բացման խոսքն ասաց ՀՅԴ Բյուրոյի անդամ ամենայն հայոց եւ Արամ Ա Կիլիկիո կաթողիկոսի ողջույնի ուղերձները: Ողջույնի խոսք ասացին նաեւ Արցախի ԱԺ նախագահ Աշոտ Դանիելյանը եւ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը:

Համաժողովի ընթացքը շարունակվեց կլոր սեղանների ձեւաչափով, որոնց ընթացքում նաեւ քննարկումներ, հարցուպատասխան եղան: Համաժողովին Հայաստանից մասնակցում էր 14 անձ՝ խմբագիրներ, ՀՀ նախկին 3 վարչապետները՝ Հրանտ Բագրատյանը, Խոսրով Հարությունյանը եւ Վազգեն Մանուկյանը, Արցախից ներկայացուցիչներ կային, հատկապես շատ էին ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչները: Համաժողովն ուղիղ հեռարձակմամբ ցուցադրվում էր ֆրանսահայ ԱՅԲ ռադիոկայանով: Համաժողովի ավարտին ամփոփիչ հայտարարություն ընդունվեց, որը տարածվել է հայկական եւ սփյուռքյան լրատվամիջոցներով: Միջոցառմանը ներկա է եղել նաեւ Արցախի մարդու իրավունքների պաշտպան **Գեղամ Ստեփանյանը**: «Հրապարակը» նրան մի քանի հարց ուղղեց:

- Ինչ տպավորություններ ունեք համաժողովից: Ըստ Ձեզ՝ այն ինչ ազդեցություն կունենա:

- Միջոցառման խորագիրը սփյուռքի մոբիլիզացիան էր՝ համահայկական հարցերի շուրջ: Միջոցառմանը մասնակցեցին թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ հայեր՝ ԱՄՆ-ից, Կանադայից, եվրոպական տարբեր երկրներից, Լատինական Ամերիկայից եւ այլն: Քննարկվեցին ամենատարբեր հարցերը՝ գոյաբանական հարցերից սկսած, դրանք այն խնդիրներն են, որոնք այժմ ծառացած են Հայաստանի առաջ, ընտրությունների հետ կապված հարցեր, Արցախի թեմայի շարունակականության մասին խոսվեց, ինչպես նաեւ սփյուռքին վերաբերող հարցեր քննարկվեցին՝ ինքնության պահպանության եւ նմանաբնույթ այլ հարցեր: Ընդհանուր դրական եմ գնահատում այս միջոցառումը, այն սփյուռքը համախմբելու հիմնական քայլերից մեկն էր: Հույս ունենք, որ այս մեկ հանդիպմամբ չենք սահմանափակվի, եւ առաջիկայում ավելի կոնկրետ դրսեւորումներ կլինեն թե՛ Հայաստանում, թե՛ սփյուռքում:

- Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ Նիկոլ Փաշինյանին վերջնականապես չի հաջողվել սփյուռքը պառակտել:

- Դրա մասին եւս խոսվեց, խոսվեց այն մասին, որ տարբեր քայլերով փորձ է արվել պառակտել սփյուռքը, ցավոք, որոշ համայնքներում ստացվել է, սակայն, ընդհանուր առմամբ, ՀՀ իշխանություններին չի հաջողվել պառակտել սփյուռքի հիմնական կառույցները, նրանք շարունակում են անել իրենց գործը՝ հենց նույն արցախյան օրակարգի շուրջ:

- Ընտրություններին հաշված օրեր են մնացել: Ինչ խոսվեց այդ մասին, ի վերջո՝ Արցախի հարցի հետ կապված հնարավոր զարգացումներն անմիջապես կապված են այն հարցի հետ, թե ով է լինելու ՀՀ վարչապետը՝ հունիսի 7-ից հետո:

- Խոսվեց նաեւ այդ մասին: Տարբեր բանախոսներ կարեւորեցին այն հանգամանքը, որ Հայաստանին անհրաժեշտ է մի իշխանություն, որը կկարեւորի ազգային հարցերը եւ պետական շահը: Սփյուռքը գտնում է, որ չպետք է անտարբեր մնա այդ հարցերին: Եղան նաեւ անձինք, ովքեր ուղիղ կոչ արեցին սփյուռքում բնակվող հայերին՝ հունիսի 7-ին անպայման գալ Հայաստան եւ մասնակցել քվեարկությանը: Այդ հարցն օրակարգային էր:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Էկոպարեկների տեղամասի պետին ազատել են

Դիլիջան քաղաքից տեղեկացանք, որ պաշտոնից ազատվել է շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Դիլիջանի տեղամասի պետ Արտյոմ Խաչատրյանը: Փետրվարի 20-ին Դիլիջանում պարեկները ծառայության ընթացքում կանգնեցրել էին Արտյոմ Խաչատրյանի վարած Toyota Prado մակնիշի ավտոմեքենան, վարորդն ավտոմեքենան կայանելուց հետո փորձել էր դիմել փախուստի: Պարեկները պարզել էին, որ Խաչատրյանը եղել է ոչ սթափ վիճակում եւ այդ պատճառով զրկվել է ավտոմեքենա վարելու իրավունքից: Էկոպարեկային ծառայությունը 2024 թ. հունվարից՝ ավելի քան 2 տարի գործում է, սակայն այդ ծառայության մարզային վարչություններից միայն Սյունիքի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզային վարչություններն ունեն պետի ժամանակավոր պաշտոնակատար, մյուս մարզային վարչությունները՝ Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի եւ Արարատի, Շիրակի եւ Արագածոտնի, Երեւանի եւ Արմավիրի մարզային վարչությունների պետերի պաշտոնները թափուր են: Էկոպարեկային ծառայությունում շատ են թափուր հաստիքները, չնայած հեռուստատեսությամբ հայտարարություններ են արվում դրանք զբաղեցնելու մասին, սակայն ցանկություն ունեցողների հոսք կարծես թե չկա:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԷԼԻ ՄԵԿ ՁՈՐ. ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԲՌՆԱՐԱՐՔՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԿԻՆԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Ապրիլի 7-ին՝ Մայրության եւ գեղեցկության օրը, Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքում իրավապահների մասնակցությամբ հերթական բռնության դեպքն է արձանագրվել, որն իրավապահ «մարմինները» փորձում են կոծկել:

Բռնության զոհը Նինա Խաչատրյանն է, որը փորձել է պաշտպանել իր որդիներին՝ հանկարծակի տուն ներխուժած ոստիկաններից եւ քննիչից: Հրմշտոցի ընթացքում ստացած հարվածներից հետո կնոջ առողջությունը կտրուկ վատացել է, եւ մի քանի օր անց նա մահացել է:

Նրա որդին՝ **Արման Առաքելյանը**, «Հրապարակին» ներկայացրեց դեպքի մանրամասները: Իրավապահները՝ 10 ոստիկան եւ 1 քննիչ, դատարանի որոշմամբ քրեական գործերից մեկի շրջանակում ներկայացել են իրենց բնակարան՝ առավոտյան 7:30-ին: «Մի տասը հոգով մտան տուն, հարայ-հրոցով, սպառնալիքներով, բռնեցին եղբորս՝ Թովմաս Առաքելյանին: Փորձում էի հարցնել, թե ինչ է պատահել, բա՝ ձենդ չբարձրացնես, հեսա քիթդ կջարդեմ: Այ սենց, խուլիգանի նման էին իրենց պահում: Կնոջ ու երեխաների առաջ բռնությամբ եղբորս ձեռքերն էին ոլորում, որ ձեռնաշղթաներ հագցնեն: Բայց մայրս խառնվեց, չէր թողնում, որ որդուն ձեռնաշղթա հագցնեն, իր կողմ էր քաշում եղբորս, նրանք էլ մորս սկսեցին բռունցքներով բրթբրթել, մոտ մի 5 որպե մորս բռնության էին ենթարկում: Այնքան ագրեսիվ էին հրում, բրթում, բռունցքները դնում էին դոշին ու բրթում էին, հնարավոր է՝ նաեւ հարվածած լինեն, մորս բրթեցին՝ գցեցին հատակին»,- պատմում է Արման Առաքելյանը:

Ձերբակալության սանկցիա նրանք չեն ներկայացրել, ընդամենը խուզարկության որոշմամբ Թովմաս Առաքելյանին, որը 44-օրյա պատերազմի մասնակից է, բերման են ենթարկել Մալաթիայի բաժին: Խուզարկությամբ հայտնաբերել են 1 գրամ կանեփանման զանգված եւ մեկ փամփուշտ, որը 44-օրյա պատերազմի մասնակցի վերջին փամփուշտն էր՝ հիշատակն ահարկու պատերազմից: Թովմաս Առաքելյանին 3 օր պահել են ձերբակալվածների պահման վայրում, ապա բաց թողել: Այս ընթացքում ընտանիքի մոր՝ տարեց կնոջ ինքնազգացողությունը վատացել է:

«Մայրս այդ դեպքից հետո այլեւս չկարողացավ հաց ուտել, գիշերը ինքնազգացողությունը վատացավ, զանգեցի շտապօգնություն, բայց մայրս չհամաձայնեց գնալ: Երկու օրից ՁՊՎ-ից եղբայրս եկավ, տեսավ եղբորս, հանգստացավ, տարանք հիվանդանոց: ԿՏ արեցին, ասացին, որ պետք է վիրահատվի, բայց հաջող ելքի հույսը 2 տոկոս է, քանի որ աղիքների նեկրոզ է սկսվել: Մայրս ապրիլի 12-ին մահացավ», - պատմում է Արման Առաքելյանը:

Նա վստահ է, որ մայրը, որը մինչ այդ դեպքը առողջ կին էր, մահացել է իրավապահների բռնարարքներից հետո: «Աղիքի օղակում է եղել, որը հրել-խփելու հետեւանքով է եղել, եւ որը բերել է աղիքի նեկրոզի»,- վստահեցնում է Արման Առաքելյանը: Նա հանցագործության մասին հաղորդում է տվել, սակայն քրեական գործ հարուցված չէ: «Իրենք քրեական վարույթ չեն հարուցում: քննչականում, ոստիկանությունում հաղորդում եմ տվել, ինձ ընդամենը գրություն են տվել, որ ուղարկել են իմ հաղորդումը հսկող դատախազին: Ես համոզված եմ, որ նրանք հետաձգում են վարույթի նախաձեռնումը, որպեսզի ես հոգնեմ, մորս թաղենք, ու դատաբժշկական փորձաքննություն չարվի»,- պատմում է Առաքելյանը:

Նա մոր դին չի հանձնել հողին, սպասում է, որ քրեական վարույթ իրականացվի, եւ Նինա Խաչատրյանի մարմինը ենթարկվի դատաբժշկական փորձաքննության: Դիմել է 1-02, ՄԻՊ, դատախազություն, քննչական, բոլոր մարմիններին, բայց առայժմ դեպքի վերաբերյալ վարույթ նախաձեռնելու որոշում չկա: «Նրանք ձգձգում են, բայց թող ինձ անձնական թշնամի չդարձնեն, նրանց արարքի ենթատեքստն այն է, որ ես՝ ինքս, գնամ, իմ հարցերը լուծեմ, ինձ դրդում են ապօրինի քայլերի, բայց ես օրենքով եմ ուզում լուծել»,- ասում է Արման Առաքելյանը: Նրա մոր մարմինն ապրիլի 12-ից Հանրապետական հիվանդանոցի դիահերձարանում է:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

«ՈՐԿԻՉՆԵՐՆ» ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄՈՒՆԵՏԻԿՆԵՐԸ. ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿՈՒՎԸ ԴԱՏԱՐԿ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԵՏ

ՔՊ

Որքան մոտենում են հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները, իշխանականներն իրենց վախերն ու ընդդիմության դեմ հակաքարոզչությունն արտահայտում են ամենագավեշտալի ու աբսուրդ սցենարներով: Երեկ խորհրդարանում հերթական հարցուպատասխանն էր, եւ, ինչպես նախորդ անգամ, երեկ էլ խորհրդարանական ընդդիմությունը բոյկոտել էր՝ չէր ներկայացել, թերեւս, փորձելով զրկել Փաշինյանին թատրոն բեմականացնելու հնարավորությունից: Սակայն Փաշինյանն ու իր խմբակը հիմա էլ ընդդիմադիրների դատարկ աթոռների դեմ սկսեցին կռիվ տալ:

Իշխանության թիվ մեկ դիջեյ Էդուարդ Աղաջանյանը բարձրագոչ հայտարարություններ արեց խորհրդարանի դերի եւ կարեւորության մասին: Նա, թերեւս, մոռացել էր, որ հենց իրենք՝ ՔՊ-ականներն են Վահագն Ալեքսանյանի շուրթերով պաշտոնապես ընդունել, որ իրենք Նիկոլ Փաշինյանի ուսապարկերն են՝ խորհրդարանում ընդամենը կոճակ սեղմողներ, որոնք վոթսափային հաղորդագրությամբ պարտավոր են հրաժարվել պատգամավորական մանդատներից ու պաշտոններից: Նա մասնավորապես հայտարարեց, թե վիճակագրություն ունի, որ այս գումարման խորհրդարանում ընդդիմադիրները մոտ 80 տոկոս բոյկոտել են կառավարության հետ հարցուպատասխանի ֆորմատը, այդպիսով՝ «անարգել» են պառլամենտական կառավարում որդեգրած պետության թիվ մեկ օրենսդիր մարմինը, ուստի կոչ արեց ժողովրդին՝ ձայն չտալ նման ընդդիմությանը: Ապա հարց ուղղեց Փաշինյանին. «Ինչո՞ւ պետք է ժողովուրդը ձայն տա այս քաղաքական ուժին», եւ ընտրողների 65 տոկոսի քվեին հավակնող ուժի առաջնորդը խորհրդարանական ռինգ բարձրացավ՝ մեն-մենակ մարտնչելու: Սկսեց հանդես գալ ժողովրդի անունից, թե ժողովուրդը հոգնել է ընդդիմադիրներից: Ապա իր կառավարման 8 տարիների ընթացքում 5 պատերազմ, ռազմական էսկալացիա եւ բազում զոհեր մեզ բերած «ազգակործան պատուհասն» ասաց, թե ընդդիմադիրները պատերազմ են բերելու. «Կարծում եմ՝ մեր ժողովուրդը պատերազմի եռագլուխ ուժին ձայն տալու պատճառ չունի: Ընդհակառակը, ունի բազմաթիվ պատճառներ՝ այդ ուժերին ձայն չտալու: Քվեարկել այդ ուժերից որեւէ մեկի օգտին՝ նշանակում է քվեարկել ինքդ քո դեմ: Ես 6 տարի անցկացրել եմ ԱԺ-ում, չեմ հիշում մի հարցուպատասխան, որին ներկա եղած չլինեմ, եթե առանձնահատուկ պատճառ չի եղել: Բացակայությունը մի բանի վկայությունն է. նրանք ընդունում են իրենց պարտությունն այս քաղաքական երկխոսության մեջ եւ վեշերը հավաքելու պրոցեսի մեջ են ԱԺ-ից: Որ ասում ենք՝ պատերազմի եռագլուխ կուսակցություն, կարող ենք նաեւ ասել՝ նախկինների եռագլուխ կուսակցություն»: Ապա ժողովրդին առաջարկեց. «Նոյան տապան նստացնել այդ ուժերին եւ բաց նավարկության ուղարկել դեպի համաշխարհային պատմության օվկիանոս»:

Բայց պետության կառավարումը հիմնովին ձախողած ուժի առաջնորդը սրանով չբավարարվեց, մեկ այլ նախապես պլանավորված հարցի պատասխանելիս կրկին վերադարձավ ընդդիմադիրներին, թե հիմա էլ են փորձում տուկի թել ու հինգ հազար դրամներ բաժանելով տիրանալ ժողովրդի քվեին:

Եվ կրկին սպառնաց Սամվել Կարապետյանին՝ հայտարարելով, թե մինչեւ տարեվերջ նա կորցնելու է իր ֆինանսական միջոցները: «Ես կանխատեսել եմ եւ պնդում եմ իմ կանխատեսումը, որ ձեր նշած բազմաաղաքացին մինչեւ տարեվերջ աղքատանալու է: Իրանից մեծ-մեծ որ պարտավորություններ ա ստանձնել, դրանք չկատարելու արդյունքում իրա նոմինալ ունեցածն իր ձեռից առնվելու է»: Պարզ չէր՝ սպառնում էր, թե նրա մնացած ունեցվածքն ի՞լ է խլելու, թե Վանգայի նման գուշակություն էր անում:

Պատասխանելով ՔՊ-ական պատգամավորի հարցին, որը հիշեցնում էր «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամների այն հայտարարությունները, թե Փաշինյանի վերընտրվելու դեպքում Հայաստանը տնտեսական լուրջ խնդիրներ է ունենալու, նա ասաց. «Ինձ այդ խոսույթն ակնհայտ է դարձնում, որ գործ ունենք օտարերկրյա գործակալի հետ: Փորձ է անում հրահրել ՀՀ-ՌԴ կոնֆլիկտ, էդ կոնֆլիկտի «այդ դարակազմիկ հանգրվանն» իրականություն դարձնելու համար ՔՊ-ականներին շնորհակալություն հայտնեց: ՔՊ-ն, ըստ Փաշինյանի, փոխել է մեր պատմության կործանարար ընթացքն ու Հայաստանը դրել է խաղաղ ու ստեղծարար պատմության ընթացքի մեջ: Հետո հայտարարեց՝ այո՛, բազում զոհերի ու զոհողությունների գնով, բազում զրկանքների ու տառապանքների գնով, դժոխքի միջով անցնելու գնով ձեռք բերվեց այն, ինչ այսօր ունենք:

««Ղարաբաղը մերն էր ու այլեւս մերը չէ» խոսույթն աշխարհաքաղաքական թակարդում մեր գտնվելու փիլիսոփայությունն ու հայեցակարգն է, իրականությունն այն է, որ Հայաստանը մերը չէր ու այլեւս մերն է, իրականություն այն է, որ մեզ հայտնի բոլոր տարածքները հայկական վերահսկողության տակ եղել են մեր պետության, մեր ինքնիշխանության ու անկախության հաշվին, ու մենք դա չենք հասկացել»,- ասաց նա:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՊԱՐԶՎԵՑ՝ ՆԱ ԱՅԴ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ ՈՒՆԻ, ՔԱՆ ՄՅՈՒՍ ՈՒԺԵՐԸ

Ազգային ինքնորոշում միավորման առաջնորդ **Պարույր Հայրիկյանն** օրեր առաջ հայտարարեց, որ պատրաստվում է առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցել ԱՄՆ-ում ազատազրկված Վարդան Ղուկասյանի՝ Դոգի գլխավորած կուսակցության հետ դաշինքով, ինչը շատերի զարմանքը հարուցեց: Ըստ Հայրիկյանի, պատճառն այն է, որ իրենց առաջարկած ծրագրային դրույթներին համաձայնել է միայն այդ քաղաքական ուժը: «Հրապարակը» զրուցել է Հայրիկյանի հետ:

- Ինչպե՞ս ստացվեց այս տարօրինակ տանդեմը:

- Մենք հայտարարել ենք, որ քանի որ ունենք ժողովրդավարության բացարձակ նախագիծ, որը քաղաքակրթական ամենաբարձր ձեռքբերումն է հանրային կյանքում, մենք այսպիսի խուժան ընտրություններում՝ Սերժի եւ Նիկոլի սահմանադրությամբ ընտրություններին չենք մասնակցի: Միակ դեպքը, որ կարող է մեզ տրամադրել՝ մասնակցելու ընտրություններին, այն է, որ բացարձակ ժողովրդավարության սկզբունքների արմատավորման համար կգոյանա դաշինք: Մենք հայտարարեցինք, որ ցանկացած ուժ կարող է արձագանքել, արձագանքեց բացառապես ԴՕԿ կուսակցության շտաբի պետ Լեւոն Բաղդասարյանը: Դրանից հետո մենք քննարկում իրականացրինք, եւ ձայների մեծամասնությամբ որոշվեց, որ պետք է մնանք մեր խոսքին հավատարիմ: ԴՕԿ-ը եկավ ընդառաջ, մենք էլ համաձայնեցինք: Այնպես չէ, որ աթոռի համար բանակցել ենք: Մեզ համար միայն մեկ խնդիր կա՝ Հայաստանը դարձնել հայերին համապատասխան երկիր, այն դարձնելով ժողովրդավարական պետություն՝ քաղաքակրթական լուծումներով: Աշխարհի բոլոր պետությունների համար մենք պետք է օրինակ դառնանք՝ իրավահավասարության հարցում….

- Բայց Վարդան Ղուկասյանը հայտնի է իր անթույլատրելի, ոչ եթերային հայհոյանքներով, նա ոչ մեկին չի խնայել, մտել է մարդկանց ընտանիքներ՝ կին, երեխա է հայհոյել, նման մարդու հետ ինչպե՞ս եք պատկերացնում համագործակցությունը, այն էլ՝ քաղաքակրթական հարցեր լուծելը…. Ձեզ համար ընդունելի՞ է այդ անպարկեշտ բառապաշարը:

- Իհարկե, այդ ամենն ինձ համար ցանկալի չէ, սակայն դա այնքան էլ կարեւոր չէ: Ես չեմ պատրաստվում այլ չափորոշիչներով առաջնորդվել: Պարզվեց՝ նա այդ բառապաշարով ավելի բարձր մակարդակ ունի, քան Հայաստանի մնացած բոլոր քաղաքական ուժերը:

- Ինչո՞վ է նրա մակարդակը բարձր մյուսներից:

- Նրանք չհասկացան, որ քաղաքացուն երկրի տերը դարձնելն ամենագլխավորն է: Մենք հո չե՞նք գնում ԴՕԿ-ի հետ ամեն բան կիսելու: Ես իմ նկարագրի տերն է, մյուսը՝ իր: Մեզ ոչ մեկը ոչինչ չի պարտադրում, մենք էլ այլոց ոչինչ չենք պարտադրում: Մեր գլխավոր նպատակն այլ է: Ունենք սկզբունքային մոտեցում:

- Իսկ ովքե՞ր են միանալու ձեզ:

- Տարբեր մարդիկ՝ ուժեր են դիմում, առաջարկում միանալ մեզ, սակայն ես չեմ խորացել: Մեզ երկրորդական հարցերը չեն հետաքրքրում: Վարդան Ղուկասյանը, իր պահվածքով հանդերձ, մնում է արդարության ջատագով: Բայց ես, որպես ԱԻՄ շտաբի պետ, գործ ունեմ ԴՕԿ կուսակցության շտաբի պետի հետ՝ այս պահին:

- Ասում եք, որ այդ հայհոյախոս մարդն ազնվության եւ արդարության ջատագով է, սակայն նրա ղեկավարած ուժի շնորհիվ 2023 թվականին Տիգրան Ավինյանը դարձավ Երեւանի քաղաքապետ:

- Դուք ինձ տանում եք մի դաշտ, որն ինձ ընդհանրապես չի հետաքրքրում:



- Բայց ինչպե՞ս չի հետաքրքրում: Գուցե այս ընտրություններից հետո էլ իրենց ձայները նվիրեն Նիկոլ Փաշինյանին, այդպիսի մեկ փորձ արդեն ունեն:

- Մենք գնում ենք մեր առաջնահերթության հետեւից, եթե մեր առաջնահերթությանը դեմ ինչ-որ քայլ կանեն, մենք կխոսենք այդ ժամանակ: Երբ հայրենիքի պաշտպանության համար գնում ենք միասնության, հո չե՞նք ասելու՝ բա գիտեք, անցած անգամ այսինչ բանն եք արել: Երբ կա բարձր ստրատեգիական նպատակ, չես քննադատում, չես մեղադրում, այլ գնում ես գերնպատակի հետեւից:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՖԻԼՄԸ ԿՑՐԻ ԱՅՆ ՍՏԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏԱՐԱԾՈՒՄ Է ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հ1



Շաբաթներ առաջ գրող, հրապարակախոս, ռեժիսոր Տիգրան Պասկեւիչյանը Ֆեյսբուքի իր էջում գրել էր, որ Հանրային հեռուստաընկերությունն իր հեղինակած ֆիլմը գրաքննության է ենթարկել: Պասկեւիչյանը մասնավորապես գրել էր. «Ողորմելի հանրային հեռուստաընկերությունը, որն արդեն հինգուկես տարի բանտել ու չի ցուցադրում իմ «Անկախության մեր ճանապարհը» ֆիլմը, դատարանով բացառեց դրա ցուցադրության որեւէ ձեւաչափ, այդ թվում՝ դահլիճային դիտումները: Որքան պետք է ատես սեփական երկրիդ պատմությունն ու ձեռքբերումները, որ գնաս նման մանր քայլի: Երբ ասում եմ՝ հանրային հեռուստաընկերություն, իհարկե՝ նկատի չունեմ մանրապճեղ չինովնիկներին, ահարկու ատիչը նրանց վերեւում է, ահարկու ատիչը նա է, ով պատմություն, սրբություն, արժեք է ասպատակում արդեն բավական երկար (անտանելի երկար) ժամանակ: Այսուհանդերձ, հուսահատ չեմ: որովհետեւ մանկուց ինձ սովորեցրել են ողորմած լինել:

Ուրեմն համարում եմ, որ 40 հազար դրամ մուծելով՝ ես ողորմություն եմ տալիս Արա Շիրինյանին (ՀՀԽ նախկին նախագահ), Վասակ Դարբինյանին (ՀՀԽ ներկա նախագահ), Արամազդ Ղալամքարյանին (Ջրային կոմիտեի նախագահ), Դավիթ Կարապետյանին (ՀՀ ԱԳՆ գլխավոր քարտուղար)... Ու վերջում հաստատ ձեզ հետաքրքրում է, թե ինչ եմ անելու հետո: Ասեմ, թող պինդ բռնվեն ողորմելիները, ինչպես նախկինում, ապագայում եւս ցուցադրելու եմ ամենատարբեր ձեւաչափերով: Թող բանուգործ թողած՝ հետեւեն ու կրկին հայցեր ներկայացնեն, ես պատրաստ եմ նոր ողորմություններ բաշխելու»: Գրառումից շաբաթներ անց՝ երեկ, Հ1-ի գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանն անդրադարձել է Պասկեւիչյանի հայտարարությանն ու բարձրացված աղմուկին, գրելով. ««Արգելված ֆիլմն» արդեն հասանելի է Հանրայինի յութուբյան պաշտոնական էջում: Ինչու ենք հիմա տեղադրում. դատարանը վերջերս որոշում հրապարակեց, որով արձանագրվեց, որ հեղինակը խախտել է Հանրային հեռուստաընկերության հեղինակային իրավունքները: Ավելի վաղ հեղինակը խախտել էր նաեւ ֆիլմի հանձնման ժամկետները: Արդյունքում՝ հիմա, երբ վերականգնվել են Հանրային հեռուստաընկերության իրավունքները, Հանրային հեռարձակողի խորհրդի համաձայնությամբ ֆիլմը դարձնում ենք հրապարակային հասանելի, որպեսզի բոլորը կարողանան գնահատել այն: Այսքանով այս պատմությունը համարում եմ սպառված»: «Հրապարակը» զրուցել է **Տիգրան Պասկեւիչյանի** հետ:

- Հովհաննես Մովսիսյանը պնդում է, որ Դուք՝ որպես ֆիլմի հեղինակ, խախտել եք Հ1-ի հեղինակային իրավունքները, սակայն իրենք, ըստ էության, մեծահոգաբար ֆիլմը տեղադրում են Յութուբում՝ դրանով փակելով թեման:

- Ֆիլմի ժամկետի մասին իրենց գրառումները բացարձակապես կեղծիք են եւ չեն համապատասխանում իրականությանը: Ֆիլմի ժամկետը եղել է հուլիսի 24-ից հոկտեմբերի 24-ը՝ 90 օր: Դրանից հետո նրանք իմ եւ իրենց կողմից կնքված պայմանագիրը երկարացրել են ավելի քան 60 օր: Այժմ արդարանալու ուրիշ բան չունեն, այս ձեւով են արդարանում: Նրանց ստերին անգամ չեմ ուզում անդրադառնալ: Ինչ վերաբերում է թեմայի սպառված լինելուն, ապա ես առաջին իսկ դատական նիստի ժամանակ եմ ասել, որ հայցն արհեստական է, եթե Հանրայինն այն տեղադրի Յութուբում, այս հարցը, թեման միանգամից կսպառվի: Իրենք չհամաձայնեցին, ես անգամ գրավոր կերպով հաշտության առաջարկ էի արել, նրանք չընդունեցին: Վերջապես այս խնդիրը լուծում ստացավ, բայց ես միշտ եմ հայտարարել, որ ճիշտ տարբերակը սա է: Այն անհեթեթ պատճառաբանությունը, որ ես իրավունք չունեմ իմ նկարած ֆիլմը ցուցադրելու, քանի որ դա իրենց գույքն է, զավեշտալի պատճառաբանություն էր եւ պետք է արանքից անմիջապես վերացվեր: Վաղը եթե ինձ ինչ-որ դահլիճում հրավիրեն ֆիլմը ցուցադրելու, ես կմիացնեմ Յութուբը եւ այդ ֆիլմը ցույց կտամ: Հ1-ն ասում էր, որ ֆիլմն իր գույքն է, այնպես, ինչպես իր սեղանները, աթոռները, ափսեները.... ես չեմ կարող հիմա ասել, որ շնորհակալ եմ իրենցից, քանի որ հինգ տարի շարունակ ձգձգեցին, սակայն լավ է, որ ի վերջո այն տեղադրվեց Յութուբում:

- Ըստ Ձեզ՝ ի՞նչը դրդեց Հ1-ին՝ կոմպրոմիսի գնալ այս հարցում:

- Ես կարծում եմ, որ նախ հանրային մեծ հետաքրքրությունը դրդեց նրանց այդ քայլին գնալ, ինչպես նաեւ լրատվամիջոցները լավ աշխատեցին, սոցիալական ցանցերը եւ այլն, Հ1-ը հասկացավ՝ կամ պետք է ընդունի, որ գրաքննություն է անում, կա՛մ ֆիլմը պետք է ցուցադրի: Որպեսզի գրաքննության փաստը չընդունեն, որոշեցին հարցն այսպես փակել: Ֆիլմը հենց այս պահին արդեն հասանելի է....

- Ի՞նչ կտա ֆիլմը հեռուստադիտողին:

- Ես ֆիլմ եմ նկարել պատմական կոնկրետ ժամանակահատվածի մասին: Առաջին բանը, որ կարող է տալ հեռուստադիտողին՝ գիտելիքն է: Մի քանի տարի առաջ ես մի տեղ դաս էի տալիս, ուսանողներին հարցնում էի՝ ի՞նչ գիտեք Ղարաբաղյան շարժման մասին: Նրանք ոչինչ չգիտեին, հարցնում էի՝ գիտե՞ք Ղարաբաղ կոմիտեի մասին որեւէ բան, պատասխանում էին՝ ոչ: Առնվազն կարծում եմ, որ այս ֆիլմը կտա այդ գիտելիքները եւ, իհարկե, կցրի այն ստերը, որը տարածում է Փաշինյանի իշխանությունը, թե իբրեւ շարժումը ներդրվել է ԿԳԲ-ի կողմից, որ այն ռուսական պրոյեկտ է եղել եւ այլն: Ֆիլմը ժողովրդի հետեւողական պայքարի մասին է, որը 88-ի շարժումից հասավ Անկախություն:

ՄՐՑՈՒՅԹԻ ՐԱՎԵՐՆԵՐ ԵՆ ԳՐՈՒՄ ԿՈՆԿՐԵՏ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

«Ուժեղ Հայաստան», «Նոր դարաշրջան» եւ «Միավորված հայեր» կուսակցություններն իրենց համագումարներում հաստատել են «Ուժեղ Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակի առաջին 36 անունները: Դաշինքի ցուցակի 33-րդ համարը փաստաբան, պետական գնումների գծով մասնագետ **Հասմիկ Ենգոյանն** է: «Հրապարակ»-ի հետ զրույցում Ենգոյանը նշեց, որ որպես պատգամավորության թեկնածու առաջադրվելու առաջարկը ստացել է թիմից՝ ցուցակները հրապարակելուց երեք-չորս օր առաջ:

Հարցին, թե ինչու է հենց այս թիմին միանալու որոշում կայացրել, Ենգոյանը նշեց. «Ես ուզում եմ, որ երկիրն ուժեղ, կարող ուժ ղեկավարի, որը պատկերացնում է՝ ցանկացած ոլորտում ինչ գործեր կարող է անել: Ես էլ պետական գնումների ոլորտում բազմաթիվ առաջարկներ ունեի, եւ սա հնարավորություն է, որ իմ խոսքն ավելի հրապարակային դառնա, ինչպես նաեւ՝ մասնակից լինեմ դրական փոփոխություններին: Ես թիմում անձամբ ճանաչել եմ մարդկանց, որոնք իրենց ոլորտներում շատ կայացած են եւ իրենց շատ ծրագրեր՝ թե՛ իրավաբանական, թե՛ տնտեսագիտական ոլորտներում, որոնք իր համար հոգեհարազատ են: Ես տարիներ ի վեր խնդիրների մասին խոսել եմ: Մասնավորապես պետական գնումների ոլորտում ուզում եմ ես էլ ինչ-որ մի բան փորձեմ անել, որովհետեւ երբ չունես թիմ, դառնում ես զուտ դասախոս՝ խոսելու մակարդակում: Իսկ թիմում խոսքը կարող է գործ դառնալ»:

Անդրադառնալով պետական գնումների ոլորտում առկա խնդիրներին՝ նա նշեց. «Պետական բյուջեի 40-45%-ը ծախսվում է պետական գնումների վրա: Պատկերացրեք՝ եթե 45%-ը մենք կարողանանք արդյունավետ օգտագործել, ինչքան խնայողություն կունենանք, ինչքան մեր երկիրը տնտեսական առումով զարգացում կապրի: Պետական գնումների համակարգում խնդիրները եւ կոռուպցիոն ռիսկերը շատ մեծ են: Սկսած սովորական իրավական ընթացակարգային հարցերից, որը բերում է կոռուպցիոն վտանգների, վերջացրած նրանով, որ, օրինակ, մրցույթի հրավերներ են գրում ոնց որ հատուկ ինչ-որ մարդկանց համար, որ միայն իրենք են համապատասխանում մասնակցության պահանջներին: Կա՛մ անհիմն պայմանագրեր են լուծարում, կա՛մ մեկ անձից գնման ընթացակարգով են իրականացնում պետական գնումը՝ մրցույթ հայտարարելու փոխարեն: Մեկ անձից գնում կատարելու դեպքում 2 հիմք կա՝ առաջին հիմքը, երբ որ սահմանված են ոլորտներ, որտեղ թույլատրվում է մեկ անձից գնում, օրինակ՝ հեղինակային իրավունք, բացառիկ իրավունք: Երկրորդ տեսակը՝ երբ որ գնումը հրատապ է: Այսինքն՝ երբ որ դու չես հասցնում մրցույթ կազմակերպել: Նախկին իշխանությունների համեմատ այժմ 40-50%-ով աճել է մեկ անձից կատարվող գնումների ծավալը: Իշխանությունն օրենսդրության մեջ մտցնում է փոփոխություն՝ բացառիկ եւ հատուկ ոլորտներին ավելացրել է ոլորտներ, որն աբսուրդ է: Այսինքն՝ սա մի խախտում է, երբ բացառիկ դեպքերի մասին օրենքով թույլատրելի ոլորտներն արհեստականորեն ուռճացվում են: Իսկ ինչ վերաբերում է հրատապ գնումներին, այստեղ էլ արհեստականորեն ստեղծում են հրատապության հիմքեր: Գնումը չեն իրականացնում, մրցույթ չեն հայտարարում, վերջին պահին, որպես հրատապ գնում, իրականացնում են մեկ անձից կատարվող ընթացակարգով: Այս դեպքում մեկ անձից գնումն իրականացվում է նախահաշվային գնով, այսինքն՝ եթե պետությունը որոշել է 1 հատ գրիչը գնել 1000 դրամով, մեկ անձից կատարվող գնման դեպքում հենց այդ գնով էլ գնում են կամ չնչին տարբերությամբ, իսկ մրցույթի դեպքում շատ ավելի մատչելի արժեքների առաջարկներ լինում են: Բացի այդ, հանրային վերահսկողություն էլ հիմա դժվար է իրականացնել, քանի որ եթե նախկինում ֆինանսների նախարարության գնումների կայքում բոլոր պայմանագրերը հրապարակում էին, ապա այժմ չեն հրապարակում, ու պատճառաբանությունն այն է, որ թշնամի պետությունները չտեսնեն, թե մենք ինչ ենք գնում մեկ անձից գնման ընթացակարգով, ընդ որում՝ զենքի, զինամթերքի ու նմանատիպ գնումները երբեւէ չեն հրապարակվել կայքում»:

ՌԵՍԱԿՔ

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ՝ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԼՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՆ



Արտաքին աջակցությունը որեւէ ընտրություններում կարող է հետաքրքիր, անգամ կարեւոր համարվել, բայց երբեք դա վճռորոշ չէ: Ամենամեծ մոլորությունը, որ ժամանակ առ ժամանակ լսում ենք, այն է, թե արտաքին աշխարհում ինչ-որ տեղ կայացվում են որոշումներ. այդպես չգիտես որտեղ եւ ինչպես որոշվեց, օրինակ, որ 2018-ին Փաշինյանը պետք է դառնա վարչապետ: Նույն «գիտունները» պնդում են, թե հիմա էլ իբր ինչ-որ անհայտ մեկն ինչ-որ տեղ, հայտնի չէ՝ որտեղ, արդեն աջակցում է նրա՝ ծախողված կառավարումը շարունակելուն:

Սա մոլորություն է, բոլոր դավադրապաշտական տեսություններից, թերեւս, ամենավտանգավորը, քանի որ մարդկանցից հոգեբանորեն խլում է որոշում կայացնելու հույսը ու մի ստվար զանգվածի մատնում անգործության: Զարդենք այդ միֆը: Իրականում ոչ ոք ոչինչ չի որոշում մեր փոխարեն. միակ որոշողն ընտրողն է, որը կարող է իր հստակ, մեծամասնական ձայնով հաղթել ցանկացած աջակցողի: Ձայն բազմաց՝ ձայն Աստծո... Բնակչության մեծամասնության եւ ոչ թե միայն ընտրությանը մասնակցողների մեջ մեծամասնության ձայնն է կարեւորը:

Եվ այսպես՝ ովքեր են ուղղակի կամ անուղղակի արդեն հայտնել իրենց աջակցությունը Փաշինյանին կամ նրա կողմից վարվող քաղաքականությանը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ «նիկոլական» կողմնորոշում ունի Ադրբեջանը, որտեղ երկրի ղեկավարից սկսած՝ բլոգերներով վերջացրած, գոհ են. «Նիկոլի թվին» եւ հաղթանակ ունեցան, եւ հարգանք-պատիվ, հայերի կողմից մուրացվող բարեկամություն տեսան: Գովերգում են ՔՊ-ին ու Փաշինյանին, երգեր ծոնում, իմաստությունը փառաբանում, երկար կյանք եւ ավելի երկար կառավարում մաղթում:

Թուրքիան նույնպես «նիկոլական» կողմնորոշում ունի, չի թաքցնում, շատ ուղղակի խոսում է այդ մասին: Զարմանալի չէ: Նախկինում դեռ ոչ մի հայ Էրդողանի գիրքը թեւի տակ՝ լայնաժպիտ նկար չէր հրապարակել եւ ցեղասպանության վերաբերյալ տարօրինակ մտքեր չէր դրել շրջանառության մեջ: Այնպես որ, իր կյանքում շատ բան տեսած Էրդողանը դեռ հույս ունի, որ հայերն իրեն կարող են ավելի զարմացնել: Եվ վերջապես՝ ԱՄՆ փոխնախագահ Վենսը եւս տրամադրված է շարունակել բարեկամական ժեստերի փոխանակումը Փաշինյանի հետ:

Հյուսիսում. Վլադիմիր Պուտինը, ելնելով վերջին խոսակցությունից, «ՔՊ-ական» չէ: Ստացվում է՝ այնուամենայնիվ, դավադրապաշտական տեսության համաձայն, Փաշինյանի գործերը վատ չեն. ինչպես ասում են՝ կան կարեւոր աջակիցներ: Բայց արդեն կա նաեւ հստակ ազդակ՝ աշխարհից եկող, որ դրսում աջակից ունենալը զուտ հոգեբանական առավելություն է՝ ոչ ավելին. անեն ինչ որոշում է ընտրողը, երբ իր քվեն տալիս է նախընտրած թեկնածուին:

Հունգարիայում ապրիլի 12-ի ընտրություններում պարտվեց 16 տարի կառավարած Օրբանը, որը դրսից, ամենատարբեր ճամբարներից աջակիցներ ուներ: Իհարկե, նաեւ ուներ չուզողներ՝ էլի հզորներից, բայց որոշումը կայացրեց հունգարացի ընտրողը, որն այդ օրը միահամուռ չմնաց տանը: Հունգարացիները՝ գրեթե 80 տոկոս մասնակցությամբ, փոփոխություն պահանջող ու իրենց մերժող հստակ քվեն տվեցին Օրբանի մրցակցին: Որեւէ երկրում, եթե ընտրողների 80 տոկոսը գնա ընտրատեղամաս, ոչ մի արտաքին ուժ ազդեցություն ունենալ չի կարող: Համախմբված ընտրողի խոսքը կդառնա վերջինն ու վճռորոշը՝ ցանկացած երկրում, անկախ արտաքին աջակիցների կամքից:

Հիմա պատկերացնենք, որ Հայաստանում ընտրողների 80 տոկոսը մասնակցի ընտրությանը: Հնարավո՞ր է այդ պայմաններում իշխանության վերարտադրություն: Հնարավո՞ր է պատկերացնել, որ մեր հանրության 80 տոկոսը կողմ է վարվող քաղաքականությանը՝ որ 80 տոկոսի համար կարեւոր է թոշակի ավելացած 10 հազարը, բայց կարեւոր չեն մեր ազգային իղձերը, մեր հաղթանակներն ու կորուստները, մեր արժանապատվությունը: Կարեւոր չեն մեր Եկեղեցին ու հավատը: Կարելի՞ է հավատալ, որ հանրության 80 տոկոսը գոհ է, որ Արցախը կորցրել ենք, ու դժգոհ չէ, որ այսօր պաշտոնյաներին արգելված է անգամ «Արցախ» բառն արտասանել: Երջանի՞կ են, որ այդ «թուլից» ազատվեցին, ու դժբախտ չեն, որ հազարավոր երիտասարդներ հայրենիքի պաշտպանության համար զոհեցին իրենց երիտասարդ կյանքը, եւ բարկացած չե՞ն, որ դա համարվեց սխալ զոհողություն, ի սկզբանե՝ սխալ հայրենասիրություն: 80 տոկոսը համաձա՞յն է, որ մեր հայրենասիրությունը Ստալինի մտածածն է, եւ ի սկզբանե Արցախն Ադրբեջանն էր: Գուցե կան մարդիկ, որոնք կարող են աբսուրդային այս մտքերին ու ամոթալի այս թեզերին հավանություն տալ, բայց, վստահաբար, նրանք մեծամասնություն չեն հանրության մեջ՝ 80 տոկոսը չեն, անգամ 20 տոկոսն էլ չեն կազմի:

Բնականաբար, իշխող ուժը հաղթանակի հույս կարող է ունենալ միայն ընտրություններում ցածր մասնակցության պայմաններում, քանի որ հնար կգտնի իրեն աջակցող փոքրամասնությանը տանել ընտրատեղամաս: Իշխող ուժի ամբարտավան խոսելաոճին ու ազնիվ գործելաոճին հավանություն տվող մի քանի տոկոս հանրությունը կկարողանա իր ճաշակը պարտադրել մեծամասնությանը, եթե մեծամասնությունը չգնա ընտրատեղամաս: Հիշենք Երեւանի ընտրությունները. միլիոնանոց մայրաքաղաքում՝ քաղաքապետ ընտրված մարդը ստացել է 70-75 հազար քվե: Միլիոնի մեջ 75 հազարը դարձել են մեծամասնություն, քանի որ մյուսները չգնացին ընտրության, որովհետեւ թեկնածուներից ոչ մեկին չուզեցին ընտրել, իսկ գործող ուժի կողմնակիցները գնացին ու հաղթեցին դժգոհության եւ հուսահատության մեջ պարփակված, բացակա մեծամասնությանը:

Եվ, ուրեմն, պետք է գնալ ընտրության, պետք է կրկնել ոչ թե Երեւանի ավագանու ընտրությունների պարտվողական տարբերակը, այլ ոգեշնչվել Հունգարիայի մեծամասնության հաղթանակի օրինակով:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏՔ ԵՆ ՍԱՐՔՈՒՄ

Իշխանությունը նպատակաուղղված փչում, ուռճացնում է ընտրակաշառքի փուչիկը: Հակակոռուպցիոն կոչվող կոմիտեն ինչ-որ ծաննագրությունների հիման վրա գործ է սարքում ընդդիմադիր երկու կանանց նկատմամբ, իսկ իշխանության հաստիքային քարոզիչ Դանիել Իոաննիսյանը դրանից առաջ գրում է Հայաստան իբր 100+ միլիոն դոլար կանխիկ գումար բերելու մասին, որը պետք է օգտագործվի ընտրությունների ֆինանսավորման համար: Ընտրությունների ժամանակ ընտրակաշառք միշտ բաժանել է իշխանությունը, ընդդիմությունը փող բաժանելու հնարավորություն չունի, քանի որ գտնվում է իշխանության համար աշխատող, այսպես կոչված, իրավապահ, իրականում՝ իշխանապահ մարմինների հսկողության տակ:

Ընդդիմությունը նաեւ կարիք չունի ընտրակաշառք բաժանելու, ընտրակաշառք են բաժանում միայն այն դեպքում, երբ վարկանիշդ այնքան ցածր է, որ ընտրողները պատրաստ են գնալ եւ քվեարկել միայն նյութական շահագրգռվածության դեպքում: Հիմա բոլորի համար տեսանելի է, որ ցածր է իշխանության վարկանիշը. քաղաքացին կանգնում Փաշինյանի դեմքին ասում է, որ իր ընտանիքում 10 ընտրող կա, եւ նրանցից ոչ մեկը ՔՊ-ի օգտին չի քվեարկելու, մարդիկ Փաշինյանին տեսնելիս իրենց տան դուռն ու լուսամուտներն են փակում, որ նա ներս չմտնի եւ չպղծի իրենց օջախը, Երեւանի կենտրոնում՝ Ազատության հրապարակում, ընդդիմությունը մի քանի տասնյակ հազար մարդու մասնակցությամբ հանրահավաք է կազմակերպում, այն դեպքում, երբ Փաշինյանը նույնիսկ մի քանի հարյուր մարդ չի կարող առանց բռնության մի տեղ բերման ենթարկել: Ինչի՞ պետք է ընդդիմությունն ընտրակաշառք բաժանի, երբ առանց դրա էլ կարող է հաղթել իշխանությանը:

Իշխանությունը եւ նրա քարոզիչներն այդքան խոսում են ընտրակաշառքի մասին, թե իբր ընդդիմությունը մարդկանց ընտրակաշառք է բաժանում, բայց չեն կարող ցույց տալ գոնե մի դեպք, գոնե մի մարդու, որ կարող է ասել, որ իրեն փող են տվել կամ անվճար ծառայություն են մատուցել՝ պայմանով, որ դրա դիմաց նա պետք է գնա եւ ընտրի որեւէ կուսակցության: Նման դեպք չկա, որեւէ ծաննագրություն՝ իրական կամ սարքովի, չկա:

«Մենք ստացել ենք տեղեկություններ, որ արդեն 100+ միլիոն դոլար բերվել է երկիր: Մենք ունենք տեղեկություններ, որ Երեւանի շատ կոնկրետ տարածքում բնակվող անձինք (նախկին բարձրաստիճան պաշտոնյայի լայն շրջապատ) համատարած կերպով 1-2 օրով թռնում են արտերկիր ու վերադառնալիս ծեռքի ուղեբեռում կանխիկ են բերում»,- գրում է իշխանության հաստիքային քարոզիչ Դանիել Իոաննիսյանը: Եթե այդպիսի տեղեկություններ կան, ինչո՞ւ փաշինյանական ծառայությունները չեն բացահայտել նման մի դեպք, նախկին պաշտոնյայի շրջապատից որեւէ մեկը կանխիկով չի կալանավորվել, այլ ծերբակալվել են կանայք, որոնցից մեկի մեղքն այն է, որ խոստացել է իր ներկայացուցչին ուղարկել գործարան, որը կտեսնի, թե ինչպես կարող են օգնել, որ այն արտադրություն սկսելու պատվեր ստանա, սա ներկայացնելով ծառայություն մատուցել: Իոաննիսյանը գրում է ինչ-որ դեպքի մասին, երբ կալանավորել են մեկին, որը 47 միլիոն ռուբլի է բերել Հայաստան՝ ակնարկելով, որ դա Ռուսաստանի կողմից ընտրություններին միջամտություն է: Եթե չգիտեն, ասենք, որ նախ 47 միլիոն ռուբլին ընդամենը 500 հազար դոլարին մոտ գումար է, այլ ոչ թե մի քանի հարյուր միլիոն դոլար: Բացի դա, ռուբլի բերելը ոչ մի կապ չունի ընտրությունների ֆինանսավորման հետ, ռուբլին բերում են Հայաստանում դոլար գնելու եւ դոլարը Ռուսաստան տանելու համար: Ռուսաստանում Հայաստանի նման փոխանակման կետեր չկան, կանխիկը կարելի է փոխանակել միայն բանկերում, խիստ հսկողության տակ, եւ այն մարդիկ, ովքեր ունեն կանխիկի խնդիր, փորձում են կանխիկ ծեռք բերել երկրից դուրս: Ռուսաստանն ինքը օրենք ունի, որով թույլ չի տալիս 10 հազար դոլարը գերազանցող գումարը կանխիկով դուրս տանել: Անցյալ տարի Վրաստանում նման մի դեպք բացահայտվեց՝ մի շատ անշնչ փոխանակման կետում մոտ 600 միլիոն ռուբլի գումար գտան, որը բերվել էր՝ էլի դոլար դարձնելու եւ Ռուսաստան տանելու համար եւ ոչ մի կապ չուներ ընտրությունների ֆինանսավորման հետ:

Իշխանությունը եւ նրա քարոզիչները տեսնում են, որ կորցրել են հանրային աջակցությունը, արդար եւ ազատ ընտրություններով իրենք հաղթելու եւ իշխանություն պահելու հնարավորություն չունեն: Միակ հույսն ընտրությունները կեղծելն է կամ ընտրության արդյունքները չեղյալ հայտարարելը: Կա երկու սցենար. կամ մինչեւ ընտրությունները ընտրակաշառքի թեման ուռճացնելով արգելել հիմնական ընդդիմադիր ուժերին՝ մասնակցել ընտրություններին, կամ կազմակերպել ընտրություններ, եւ երբ պարզվի, որ իշխանությունը պարտվել է, չեղարկել դրանց արդյունքները՝ հիմք ընդունելով ընտրությունների արդյունքների վրա ռուսական հարյուր միլիոնավոր ռուբլիների ազդեցությունը: Այս երկու տարբերակն էլ փորձարկվել է. 2024 թվականին Ռումինիայում չեղարկվեցին նախագահական ընտրությունների արդյունքները, քանի որ դրանցում հաղթում էր ԵՄ-ի համար ոչ ընդունելի Քելին Ջորջեսկուն, իսկ հաջորդ տարի Մոլդովայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների ժամանակ արգելեցին ընտրություններին մասնակցել ընդդիմադիր կուսակցություններին: Երկու դեպքում էլ՝ թեկնածուի կամ կուսակցության գործունեության մեջ ռուսական հետքի կամ ազդեցության հայտնաբերման հիմնավորմամբ: Հիմա ընդամենը այդ հետքն են սարքում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔ

ՍԱՀԱԿԱՇՎԻԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԻՋՈՎ ԱՆՑԵԼ ԵՆՔ, ՆՈՒՅՆԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ Է ՍՊԱՍՎՈՒՄ



«Նիկոլ Փաշինյանի վիճակը նախանձելի չէ, հատկապես հաշվի առնելով Փաշինյան-Պուտին վերջին հանդիպումը»,- «Հրապարակի» հետ զրույցում ասաց վրացահայ գործիչ **Գուրգեն Մխիթարյանը**: «Այդ հանդիպման ամենակարեւոր ուղերձը, որ հնչեց, այն էր, որ Արցախը դուք եք հանձնել: Դա ազդակ է Հայաստանի քաղաքացիներին, որ մի քիչ խելքները գլուխները հավաքեն, մտածեն՝ ինչ են անում: Եթե կանգնած է հայության լինել-չլինելու հարցը, այդտեղ արդեն ոգեւորվելը, ապահովագրական բժշկությամբ ուրախանալը նշանակում է վաճառվել, խաբվել: Ու այդ ժողովուրդը պատասխան է տալու իր ապագա սերունդների առաջ, սերունդների ապագան կարող են ուղղակի վերացնել»,- ասաց նա:

Վրացահայ գործիչը շեշտում է, որ այս ամեն ինչի հիմքում 2018-ի, իր բնորոշմամբ, ազգակործան «հեղափոխությունն» էր, որի պատասխանատվությունը միայն Փաշինյանը չպետք է կրի: «300 հազարի չափ մարդ դուրս էր եկել փողոց, դրանք էլ պիտի պատասխանատվություն կրեն՝ առնվազն բարոյական: Մի ուրիշ հանգամանքի վրա էլ կուզենայի ուշադրություն հրավիրել, Օվերչուկի հայտարարությունն ավելի կարեւոր էր, նա ասաց այն, ինչ չասաց Պուտինը: Այդ հանդիպման ժամանակ Պուտինը 2-3 անգամ հիշատակեց ֆիտո-սանիտարական վերահսկողությունը, եւ հենց հաջորդ օրը ծաղիկները ենթարկվեցին հետազոտության, եւ մուտքը ՌԴ թույլ չտրվեց: Դրանք հոլանդական ծաղիկներ էին, իսկ Հոլանդիան՝ որպես արեւմտյան, սկանդինավյան երկիր, պարզ է, որ արեւմտյան քաղաքականություն է վարում, եւ Հայաստանն օգնում է այդ արեւմտյան երկրին՝ եկամուտ ձեռք բերել Ռուսաստանի մեծ շուկայի հաշվին: Բայց ռուսներն այդքան էլ հիմար չեն, հատկապես՝ Ռուսաստանի նախագահը, որ Փաշինյանի նման ապուշը կարողանար նրան հիմարացնել կամ խաբել: Եթե դա լիներ տեղական հայկական ծաղիկ, չէին արգելի, աչք կփակեին, եթե խնդիր լիներ»,- ասաց վրացահայ գործիչը:

Իհարկե, Հայաստանում շատ կան ծաղիկ աճեցնողներ, ովքեր ունեն ընտանեկան բիզնես եւ Ռուսաստան ծաղիկ են արտահանում, սակայն Եվրոպա-Հայաստան-Ռուսաստան ծաղիկների վերավաճառողը Հայաստանի թիվ մեկ մագնատն է, որը խաբում է Ռուսաստանին՝ հարվածելով Հայաստանի տնտեսությանը: «Հայաստանում ծաղիկ աճեցնողներն իրենք էլ են տուժում այդ մեծ առքուվաճառք անելու հետեւանքով, որն այս իշխանության հովանավորությունը վայելողներն անում են եվրոպացիների հետ միասին: Անձնական, կուսակցական շահերն ավելի վեր են դասում Հայաստանի Հանրապետությունից, քան ազգային ու ժողովրդի շահերը»,- շեշտում է զրուցակիցս:

Օվերչուկը հիշատակել է նաեւ Թուրքմենչայի եւ Քյուրուքչայի պայմանագրերը, դրանով Ռուսաստանն Օվերչուկի բերանով ասում է, որ ոչ մի Թրամփի նախագիծ չի կարող գործել: Դրան ի պատասխան, հնչում է Ալեն Սիմոնյանի հայտարարությունը, որ Հայաստանի երաշխավորն Ադրբեջանն է, սակայն դա չի լինելու: «Ըստ Թուրքմենչայի եւ Քյուրուքչայի պայմանագրերի, Արաքս գետի ափով 200 կիլոմետր, սկսած Ջուղայից մինչեւ Ղարաբաղի հարավը, Խուդաֆերինի կամուրջը եւ այլն, այդ ամբողջն անցել է Ռուսաստանին: Ապագայի հավանականությունն այն է, որ Արցախն անցնի Ռուսաստանին, բայց կարեւորն այն է, որ ժողովուրդը կարողանա վերադառնալ այնտեղ ու ապրել»,- շեշտեց Մխիթարյանը: Նա կարծում է, որ Հայաստանն իր դերը՝ որպես բուֆերային երկիր, կորցրել է ու այլեւս հետաքրքիր չէ Ռուսաստանին, իսկ փոխօգնության պայմանագիրը Ռուսաստանը չի խզում՝ միայն բարի կամքից ելնելով: «Եթե նախկինում Հայաստանը Ռուսաստանի հետ հարաբերություններում կարող էր շահարկել իր աշխարհագրական դիրքը, ապա հայտնի փոփոխություններից հետո Հայաստանը կորցրել է իր հետաքրքրությունը Ռուսաստանի համար, եւ միայն ու միայն ՌԴ-ի բարի կամքի դրսեւորումն է մնում: Պուտինը շեշտեց Ռուսաստանի եւ Հայաստանի երկու ժողովուրդների քաղաքակրթական պատկանելությունը: Դա մի փոքրիկ ակնարկ էր, որ կամ պետք է լինես Արեւելքում ձեւավորվող մակրոտնտեսաքաղաքական համակարգի մի փոքրիկ մասնիկ եւ պահպանես քո գոյությունը, կամ պետք է թեքվես դեպի Արեւմուտք եւ ինքնակործանման գնաս: Չգիտեմ, թե ՀՀ քաղաքացիներն ինչ են մտածում, այդ մասին ժամանակին շատ լավ ասել է Հովհաննես Թումանյանն իր «Շունը» պատմվածքում: Բառացի կրկնում եմ Թումանյանի խոսքերը. «Արեւելքում է շան հայրենիքը, արեւելքում ծագում է արեւը, իսկ արեւմուտքում մայր է մտնում արեւը»: Եվ դա այսօր այդպես է՝ Արեւելքն է արվեստի եւ արհեստների հայրենիքը, եւ արեւելյան ժողովուրդները ոչ մի անգամ մարդակերությամբ չեն զբաղվել, մարդակերության հետք ու նշույլ չկա մարդկանց մոտ, քանի որ շուն են ունեցել, կարողացել են նախիր եւ հոտեր կազմել, ունենալ սննդի համար միշտ պատրաստի միս ու կաթնեղեն եւ մարդակերության կարիք չեն զգացել, ի տարբերություն մեր դրացի ժողովուրդների՝ հասկանում եք, թե որ արեւմտյան դրացի ժողովուրդների, որոնք շուն չեն ունեցել»:

Մխիթարյանը հիշեց, որ Պուտինը Փաշինյանի հետ զրույցում ասում էր, որ իրենք կընդունեն ամեն ինչ, ինչը կաշխատի հայ ժողովրդի օգտին, եւ դա սպառնալիք էր՝ ուղղված Փաշինյանին, ու, ցավոք, դրա հետեւանքներն իրենց վրա զգալու են սովորական հայերը: «Մենք Վրաստանում դա տեսել ենք, դրա միջով անցել ենք, Սահակաշվիլուց տեսել ենք՝ ինչպես ժողովուրդն ու երկիրը տուժեցին, ու եթե Հայաստանից եկող զբոսաշրջիկներին թվում է, թե մենք շատ լավ ենք ապրում, դա միայն թվում է, մենք գիտենք, թե ինչի միջով ենք անցել, ու ինչ հետեւանք կա, եւ դա հետեւանք է Սահակաշվիլու վարած քաղաքականության եւ ոչ թե ներկա իշխանությունների»,- եզրափակեց Գուրգեն Մխիթարյանը:

Հայկա
ԱԼՈՅԱՆ

ԿՈՆՖԼԻԿՏ ԹՐԱՄՓԻ ԵՎ ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՄԻՋԵՎ



Անցյալ տարվա մայիսին ընտրված Հռոմի Լեւոն 14-րդ պապը, որը ծնունդով ամերիկացի է, սակայն եկեղեցական իր առաքելության մի ստվար մասն անցկացրել է Լատինական Ամերիկայում, դարձել է ԱՄՆ նախագահի քննադատությունների նոր թիրախը: Նկատենք, որ Լեւոն 14-րդը պապ է ընտրվել կարդինալների կոնկլավի կողմից հենց այն պատճառով, որ մոտ է կանգնած կարիքավորներին եւ զարգացող երկրներին, գիտի նրանց խնդիրները: Բացի այդ, համարվում էր հանգուցյալ Ֆրանցիսկոս պապի բարենորոգումների գաղափարակիցը եւ այդ առումով հեռու էր պահպանողական այն կաթոլիկներից, ինչպիսին է ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը: Իսկ պահպանողական կաթոլիկները, ինչպես գիտենք, աջակցում են Թրամփին: Նման իրավիճակում, ինչպես նկատում է ռուս վերլուծաբան Ալեքսեյ Մակարկինը, Սրբազան քահանայապետի եւ Դոնալդ Թրամփի միջեւ կոնֆլիկտը միայն ժամանակի հարց էր:

Առաջին բախումը տեղի ունեցավ հունվարին, երբ Լեւոն 14-րդն իր ելույթում դատապարտեց դիվանագիտական երկխոսությունն «ուժի դիվանագիտությամբ» փոխարինելու քաղաքականությունը եւ հայտարարեց, որ պատերազմը կրկին դառնում է նորաոճ, իսկ պատերազմելու ձգտումը տարածվում է: Երկրներն էլ, ըստ Պապի, օգտագործում են իրենց հզորությունը՝ աշխարհում տիրապետություն հաստատելու համար: Պենտագոնը դա ընդունեց որպես Թրամփի վարչակազմին ուղղված քննադատություն: Հայտնվեցին հաղորդումներ, որ այդ ժամանակ Վատիկանում Սբ Աթոռի նվիրակ կարդինալ Քրիստոֆ Պյերը հրավիրվել էր Պենտագոն, որտեղ զինվորական պաշտոնյաները, ներառյալ պաշտպանության կամ պատերազմի փոխնախարար Էլբրիջ Քոլբին, «դառնահամ դասախոսություն» էին կարդացել նրա համար (The Free Press): Հանդիպման մասնակիցներից մեկը հայտարարել էր, որ ԱՄՆ-ն ունի այնքան ռազմական հզորություն, որ աշխարհում կարող է անել այն, ինչ ուզենա, եւ խորհուրդ է տրվում Կաթոլիկ եկեղեցուն՝ կանգնել Միացյալ Նահանգների կողքին: Մեկ այլ ամերիկացի պաշտոնյա էլ այնքան հեռուն էր գնացել, որ հիշել էր Կաթոլիկ եկեղեցու պատմության մռայլ շրջաններից մեկը՝ Ավինյոնյան գերությունը՝ 1309-77 թթ., երբ Սբ քահանայապետները գտնվում էին ֆրանսիական թագի լիակատար հսկողության ներքո: Ասում են, որ կարդինալ Պյերը լուռ լսել է դասախոսությունը, իսկ հետո Վատիկանը որոշեց մեղմել իրավիճակը: Սբ Աթոռի խոսնակ Մաթեո Բրունին հայտարարեց, որ որոշ ԶԼՄ-ներում տեղ գտած նկարագրությունները չեն համապատասխանում իրականությանը:

Հաջորդ բախումը եղավ այս ապրիլին: Իրանական էսկալացիայի ժամանակ Լեւոն 14-րդը հավատացյալներին կոչ է արել աղոթել, որ խաղաղություն հաստատվի, զենքերը լռեն, եւ լսելի լինի ժողովուրդների ձայնը: Նա մերձավորարեւելյան վերջին էսկալացիան որակեց որպես մարդկության սկանդալ: Այս քննադատությունը դժվար թե դուր գար Թրամփին, սակայն հանրային արձագանք չեղավ: Իրավիճակը փոխվեց, երբ ԱՄՆ պատերազմի նախարար Հեգսեթը խնդրեց ամերիկացիներին՝ աղոթել նրանց համար, ովքեր կռվում են Իրանում: Ի պատասխան՝ Պապը հայտարարեց. «Մենք հակված ենք մեզ զորավոր կարծել, երբ տիրապետում ենք, հաղթանակած ենք, երբ ոչնչացնում ենք մեզնմաններին, հակված ենք մեզ մեծ կարծել, երբ մեզնից վախենում են: Մինչդեռ, ճշմարիտ Մարդ եւ ճշմարիտ Աստված Քրիստոսն առաջարկում է մեզ ինքնազոհության, ծառայության եւ սիրո օրինակ»: Մի քանի օր անց Թրամփը քննադատեց Լեւոն 14-րդին՝ կոչ անելով դադարեցնել ձախ-արմատականներին հաճոյանալը եւ կենտրոնանալ այն բանի վրա, որ լինի մեծ Պապ, ոչ թե քաղաքական գործիչ: Ու հիշեցրեց, որ Լեւոն 14-րդը չէր լինի Պապ, եթե ինքը Սպիտակ տանը չլիներ: Նա մեղադրեց Կաթոլիկ եկեղեցու հովվապետին, որ նա նորմալ է համարում այն, որ Իրանը միջուկային զենք ունի ու դատապարտում է Վենեսուելայի վրա ամերիկյան հարձակումը: Թրամփն ասաց, որ չի ուզում մի այնպիսի Հռոմի պապ, որը քննադատում է ԱՄՆ նախագահին: Լեւոն 14-րդը պատասխանեց զուսպ՝ հայտարարելով, որ ոմանք Ավետարանն օգտագործում են ոչ իր նշանակությամբ, եւ հայտարարեց, որ այսուհետ ավելի բարձր է խոսելու ընդդեմ պատերազմի, հանուն խաղաղության, երկխոսության եւ պետությունների միջեւ բազմակողմ հարաբերությունների: Պապը նաեւ ասաց, որ մտադրություն չունի բանավիճելու Թրամփի հետ, սակայն ինչ-որ մեկը պետք է կանգնի ու ասի, որ ավելի լավ լուծում կա, քան այսքան մարդկանց զոհվելը: Վատիկանը վերջին հարյուրամյակում ցանկացած պատերազմի հավանություն չի տալիս, եւ Լեւոն 14-րդն էլ այդ կուրսի հետեւորդն է:

Սակայն Թրամփի համար ցանկացած քննադատություն ընդունելի չէ: Նրա համար ամերիկյան ներքին եւ արտաքին քաղաքականությունն ԱՄՆ թշնամիների դեմ մղվող «Սրբազան պատերազմի» բաղադրիչներ են: Միացյալ Նահանգները կարող է ճնշել Վատիկանին՝ սպառնալով, որ կկրճատի ֆինանսական հատկացումները եւ թույլ չի տա, որ ամերիկացի բարերարները հանգանակություններ կատարեն: Չնայած այդ բարերարները հիացած չեն Թրամփով: Ի վերջո, Թրամփը 2029-ի հունվարին, այսպես թե այնպես, հեռանալու է, իսկ Հռոմի հովվապետը շարունակելու է իր առաքելությունն իրականացնել նաեւ ԱՄՆ հաջորդ նախագահի օրոք:

Նարեկ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ովքեր են իրականում եղել «Երեք հրացանակիր» Աթոսը, Պորտոսն ու Արամիսը

1844 թվականին հրատարակված «Երեք հրացանակիրները» վեպը կարելի է համարել Ալեքսանդր Դյումայի գլուխգործոցներից մեկը: Իսկ վեպի հերոսներից Աթոսը, Պորտոսն ու Արամիսը դարձել են ընկերության, մեծահոգության եւ ասպետական պատվախնդրության սիմվոլներ: Արդյոք այս կերպարները գրողի երեւակայության արդյունքն են, թե՞ կերպարների հետեւում իրական մարդիկ են, պատմական անձեր, որոնք ապրել են ու գործել միջնադարյան Ֆրանսիայում: Ուսումնասիրողները նշում են, որ Դյուման Աթոսի, Պորտոսի եւ Արամիսի կերպարները չի հորինել, եւ այդ կերպարների հետեւում լիովին իրական պատմական անձեր են կանգնած, ազնվականներ, զինվորականներ, որոնք ապրել ու գործել են 17-րդ դարի Ֆրանսիայում: Եվ այսպես, իրական Աթոսն Արման դե Սիյեգ դ՛Աթոս դ՛Օթվիլն է: Գրական կերպարում Աթոսը կոմս դե լա Ֆերան է՝ ողբերգական անցյալով եւ խորը պատվախնդրությամբ մի ազնվական: Կերպարի հետեւում կանգնած պատմական անձը եղել է ֆրանսիացի ազնվական՝ Բեարնի շրջանից, որը գտնվում է Ֆրանսիայի հարավ-արեւմտյան հատվածում: Ծառայել է որպես հրացանակիր՝ Լուի 13-րդի գահակալության օրոք: Զոհվել է 1643 թվականին, ենթադրաբար՝ մենամարտից: Իրական Աթոսի մասին կենսագրական տեղեկությունները շատ քիչ են: Շատ բան նրա կյանքից մինչ այժմ անհայտ է: Պորտոսն իրականում Իսահակ դե Պորտոն է: Նա նույնպես Բեարնից է ծագում: Եղել է ազնվական, ծառայել արքայական գվարդիայում, ապա տեղափոխվել հրացանակիրների գունդ: Զինվորական ծառայությունից հետո իրական Պորտոսը վերադարձել է հայրենի երկրամաս, վարչական աշխատանքի անցել Նավարենքսի ամրոցում: Նրա հետագա կյանքի մասին շատ բան չգիտենք: Հայտնի է, որ մահացել է մոտ 1670 թվականին: Գրական կերպարի եւ իրական Իսահակ դե Պորտոյի բնավորությունները եղել են խիստ տարբեր: Արամիսն իրականում Անրի դ՛Արամիթցն է: Վեպում նա մի անձ է, որը տատանվում է զինվորական եւ եկեղեցական ծառայության միջեւ: Նույնպես ծնունդով Բեարնից է: Հրացանակիրների գնդում սկսել է ծառայել 1640 թվականից: Զինվորական ծառայությունից հետո տեղափոխվել է հայրենի երկրամաս, ամուսնացել, ունեցել մի քանի երեխա: Ապրել է որպես գավառական ազնվական: Թեեւ իրական Արամիսը եկեղեցական շրջանակների հետ որոշակի կապ ունեցել է, սակայն Դյուման այս գիծը հատկապես ուժեղացրել է, եւ դա արդեն հորինվածք է: Դ՛Արամիթցների ընտանիքի պատմությունն անհետանում է 18-րդ դարի վերջերից: Շատ բան հնարավոր չէ իրական այս անձերի մասին իմանալ, քանի որ նաեւ Ֆրանսիական հեղափոխության պատճառով շատ արխիվներ պարզապես ոչնչացվել են:

ԿՈՎԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՏԱՊԱԼԵԼ ԵՆ

ՏԱՎՈՒՇ

1990-ականների սկզբին Հայաստանում գյուղատնտեսական կենդանիները փոխանցվեցին գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, եւ ապակենտրոնացված, մասնատված նախիրներում հնարավոր չէր իրականացնել տոհմասելեկցիոն աշխատանքներ: Մասնավորեցվեցին նաեւ մինչ այդ գործող տոհմակայանները եւ արհեստական սերմնավորման կայանները, որի հետեւանքով կովերի արհեստական սերմնավորման աշխատանքներ գրեթե չէին իրականացվում: Կառավարության աջակցությամբ 1998-2008 թվականներին մասամբ վերականգնվեց արհեստական սերմնավորման գործընթացը, որի շնորհիվ տարեկան սերմնավորվում էր 10-15 հազար կով: Ըստ էկոնոմիկայի նախարարության՝ 2008 թվականից մինչ օրս կովերի արհեստական սերմնավորման տարեկան ծավալները տատանվում են 17-20 հազարի սահմաններում եւ իրականացվում են հիմնականում խոշոր տնտեսություններում (100 կովից ավելի), որոնցում կենտրոնացված է հանրապետությունում բուծվող տավարի ընդամենը 10%-ը:

Կառավարության կողմից այժմ իրականացվող մթերատվության բարձրացման ծրագիրը կրում է փորձնական բնույթ, որի նպատակն է՝ 2025-2026 թվականների ընթացքում բարելավել Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի մարզերում բուծվող տավարի ցեղերի գենոֆոնդը, բարձրացնել մթերատվությունը եւ կառավարության աջակցությամբ փոխհատուցել 25 հազար 280 գլուխ կովերի արհեստական սերմնավորման ծախսերի շուրջ 70%-ը: Տավուշի մարզպետարանը 2024-ին մրցույթ է հայտարարել մարզում՝ 1410 կովերի արհեստական սերմնավորման համար: Մրցույթն անցկացվել է կառավարության 2024 թ. օգոստոսի 22-ի որոշմամբ հաստատված՝ Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի շրջանակներում: Ծրագրով նախատեսված էր յուրաքանչյուր կովի սերմնավորման համար սերմնավորողին փոխհատուցել 10 հազար դրամ (եւս 5 հազար դրամ վճարում է անասնատերը): Մրցույթին կարող էին մասնակցել այն կազմակերպությունները, որոնք ունեն տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու առնվազն մեկ տարվա փորձ եւ համապատասխան մասնագետներ, նաեւ՝ հարկային եւ վարկային դրական պատմություն:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2024թ. դեկտեմբերի 12-ն էր, սակայն մրցույթը չի կայացել՝ հայտեր չեն եղել: Մարզպետարանը նոր մրցույթ է հայտարարել 2025թ. փետրվարին: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել, թե որ կազմակերպությունն է հաղթել մրցույթում: Մարզպետարանից պատասխանել են. «Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կովերի արհեստական սերմնավորման վերաբերյալ մրցույթում հաղթող է ճանաչվել Ա/Ձ Դավիթ Նավասարդյանը: Պայմանագրի կնքման աշխատանքներն ընթացքի մեջ են»: Հետո մարզպետարանից տեղեկացա, որ Դավիթ Նավասարդյանի հետ մարզի 1410 կովի արհեստական սերմնավորման մասին պայմանագիր չի կնքել, 2025 թվականին Տավուշի մարզում կովերի արհեստական սերմնավորում չի եղել:

2026 թ. ապրիլի 10-ին Բերդի համայնքապետարանի ինտերնետ կայքում հայտարարություն է զետեղվել այն մասին, որ պետական աջակցությամբ իրականացվող «Մթերատվության բարձրացման փորձնական» ծրագրի շրջանակում Բերդ համայնքի անասնապահությամբ զբաղվող տնտեսվարողների համար ընձեռվում է բացառիկ հնարավորություն՝ խոշոր եղջերավոր կենդանիների արհեստական սերմնավորման գինը 5 հազար դրամ է, այդ հնարավորությունից օգտվելու համար անհրաժեշտ է նախօրոք գրանցվել՝ զանգահարելով հայտարարության մեջ նշված հեռախոսահամարներով: Բայց նշված գինը կգործի սահմանափակ գլխաքանակի համար: Զանգահարեցի հայտարարության մեջ նշված հեռախոսահամարով, զրուցեցի Բերդի անասնաբույժ Սամվել Նավասարդյանի հետ: Նա ասաց, որ Դավիթ Նավասարդյանն իր որդին է, նաեւ հայտնեց, որ ծրագիրը եռակողմ է իրականացվում՝ էկոնոմիկայի նախարարություն, Բերդի համայնքապետարան եւ ԱՁ: Ասաց, որ անասունների արհեստական սերմնավորում իրականացնելու են միայն Բերդ համայնքում, արդեն իրականացրել են 8 կովի արհեստական սերմնավորում: Յուրաքանչյուր եռամսյակի վերջում սննդամթերքի անվտանգության տեսչության աշխատակիցները կովերից արյան նմուշառում կատարելով ստուգելու են իրենց կատարած աշխատանքը, պարզեն՝ կովերը հղիացե՞լ են, թե՞ ոչ: Նա հավելեց, որ արհեստական սերմավորվող ամեն կովի հաշվով պետբյուջեից անհատ ձեռներեցին տրվելու է 10 հազար դրամ, որից 3 հազարը պետական տուրք են վճարելու: Էկոնոմիկայի նախարարությունը նախատեսել էր 2025-ին Տավուշում արհեստական սերմանավորել 1410 կով, սակայն դա չարվեց, 2026-ին Տավուշում կսերմնավորվի ընդամենը 50 կով, այն էլ՝ միայն մարզի 4 համայնքներից մեկում՝ Բերդում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՖԻԼՄ, ՈՐԸ ՀԱՏԿԱՊԵՍ ԱՅՍՕՐ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

Ռեժիսոր Վլադիմիր Բորտկոյի նկարահանած «Շան սիրտը» կինոնկարն էկրան է բարձրացել 1988 թվականին: Ֆիլմի հիմքում Միխայիլ Բուլգակովի համանուն վիպակն է: Կինոնկարը Բուլգակովի գրական ժառանգության ամենաճշգրիտ էկրանավորումներից է: «Շան սիրտը» հատկապես կարեւոր մշակութային եւ պատմական նշանակություն է ձեռք բերում այն պատճառով, որ էկրան է բարձրացել խորհրդային պետության վերջալույսին՝ «ուշ պերեստրոյկայի» ժամանակներում: Մասնագետներն այն համարում են ոչ միայն դասական տեքստի էկրանավորում, այլեւ՝ որպես ողջ սովետական դարաշրջանի սոցիալ-փիլիսոփայական մեկնաբանություն:

«Շան սիրտը» վիպակը Բուլգակովը գրել է 1925 թվականին: Սովետական Միությունում, սակայն, այն երկար ժամանակ չէր հրապարակվում՝ գրաքննության սահմանափակումների պատճառով: Առաջին անգամ արտասահմանում հրատարակվել է 1968-ին: Խորհրդային իրականությունում տպագրվել է միայն 80-ականների վերջերին: Վիպակն էկրանավորել է «Լենֆիլմը», հեռուստատեսությամբ ցուցադրվել է 88 թվականին: Ռեժիսոր Բորտկոն ձգտել է առավելագույնս ճշգրտորեն արտացոլել վիպակի տեքստը՝ պահպանելով նույնիսկ երկխոսությունների մեծ մասը: Սյուժեի համաձայն, վիրաբույժ գիտնական Ֆիլիպ Ֆիլիպովիչ Պերոբրաժենսկին գիտական փորձ է կատարում եւ անտուն շանը պատվաստում է մարդկային հիպոֆիզ եւ սերմնագեղձեր: Արդյունքում շունն աստիճանաբար վերածվում է մարդու եւ դառնում Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչ Շարիկով: Սակայն պարզվում է, որ այդ նոր «մարդը» կոպիտ բնազդների եւ պրիմիտիվ աշխարհայացքի կրող է: Նրա վարքագիծը հակասության մեջ է մտնում պրոֆեսորի միջավայրի հետ, որն աչքի է ընկնում մշակութայնությամբ եւ ինտելեկտուալությամբ: Պրոֆեսորի եւ Շարիկովի հարաբերություններն էլ դառնում են գործի գլխավոր դրամատիկ գիծը՝ արտացոլելով ժամանակի սոցիալական հակասականությունը: Դեպքերը ծավալվում են 1920-ականների Մոսկվայում, եւ կինոնկարում ոսկերչական ճշգրտությամբ են վերարտադրվել ժամանակի ոգին, միջավայրն ու մթնոլորտը: Կինոնկարում հանդես են եկել Եվգենի Եվստիգնեեւը, Վլադիմիր Տոլոկոննիկովը եւ այլք: Ֆիլմին ուղեկցող երաժշտությունը եւս շատ կոլորիտային է՝ 20-ական թվականների մոսկովյան ռոմանսներ, որոնք ավելի են ընդգծում մշակութային կոնտեքստն ու գործի սատիրական ուղղվածությունը:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂԱՎՆԻ

Առաջին աշխարհամարտը սկսվեց առերեւույթ Ավստրո-Հունգարիայի արքայազնի ահաբեկմամբ, որը կատարվեց սերբ ազգայնականների միջոցով: Սակայն դա ընդամենը մի պատրվակ էր: Վերլուծելով Առաջին համաշխարհային պատերազմի բռնկման

իրական դրդապատճառները՝ պետք է արձանագրել, որ եթե երկու երկրների միջեւ առկա են պատերազմելու համար հիմնական նախադրյալներ, այդ դեպքում ռազմական գործողություններ սկսելու պատրվակը չի ուշանում, իսկ եթե չկան այդ նախադրյալները, ապա նույնիսկ ամենախոշոր պատահարն էլ չի կարող պատրվակ ծառայել՝ երկրների միջեւ պատերազմ սկսելու:

Պատմությանը ծանոթ քաղաքական ամենատարրական գիտելիքներ տեր մարդիկ էլ գիտակցում են, որ երկու երկրների միջեւ պատերազմները հենց այնպես չեն բռնկվում: Եվ, առհասարակ, որեւէ երկրի ղեկավար, հատկապես՝ դեմոկրատական ձեւով ընտրվածը, առանց որեւէ պատճառի պատերազմելու ցանկություն չունի: Այսօրվա քաղաքական իրավիճակն ու աշխարհի տարբեր երկրների՝ մեկը մյուսից տնտեսական կախվածության աստիճանն ու աշխարհաքաղաքական այլ եւ այլ հարաբերություններն այնպիսին են, որ բոլորն էլ հնարավորինս խուսափում են պատերազմելով հարցեր լուծելուց: Հատկապես որ ներկա պայմաններում ռազմական գործողություններն ու զինտեխնիկայի ահռելի ծախսերը միշտ չէ, որ արդարացնում են սպասված արդյունքները:

Պատերազմները ծագում են այն ժամանակ, երբ տվյալ երկրում կատարված հիմնարար փոփոխությունների հետեւանքով ստեղծվում են աշխարհաքաղաքական նոր վերադասավորումներ, որոնք սպառնում են խախտել ուժերի՝ մինչ այդ գոյություն ունեցած քաղաքական հավասարակշռությունը: Առ այդ, միամտություն կլինի կարծել, թե պատերազմները ծագում են այս կամ այն ղեկավարի ռազմատենչության պատճառով: Նույնպիսի միամտություն է մտածել, որ երկրի ղեկավարի խաղաղասիրությունը երկիրը խաղաղ կդարձնի: Լավագույն օրինակն Ուկրաինան է, որի նորընտիր նախագահն իր անհեռատես քայլերով ու որոշումներով անտեսելով իր անմիջական՝ գերհզոր հարեւանի նկրտումները, երկիրը դարձրեց ռազմական գործողությունների թիրախ: Ոչ ոք չէր կարող ասել, որ այդ դերասան մարդն էությամբ ռազմատենչ է կամ խաղաղասեր. նա ընդամենը քաղաքականությունից հեռու մի անձ է, որ պահի տակ հայտնվել է քաղաքական ասպարեզում:

Մյուս կողմից, կա բացահայտ մի այլ ճշմարտություն եւս, որ խաղաղություն սիրողը միշտ պետք է պատրաստ լինի պատերազմի: Թշնամին՝ հատկապես հակադրվող երկիրը, աչալրջորեն հետեւում է հարեւան երկրի պաշտպանական պատրաստվածության աստիճանին. երբ որ այդ պաշտպանական համակարգում բացեր կամ տկարություններ է նկատում, առանց ժամանակ կորցնելու, ընդամենը մի պատրվակ հորինելով, հարձակվում է տվյալ երկրի վրա: Սրանք պարզ եւ անհերքելի հասկացություններ են: Կան բազմաթիվ օրինակներ: 1979-ին՝ Իրանի իսլամական հեղափոխությունից ընդամենը մեկ տարի անց, Իրանի հետ միշտ հակադրության մեջ գտնվող Իրաքի ղեկավարները նկատեցին, որ Իրանում տեղի ունեցած իշխանափոխության հետեւանքով, քայքայվել է երկրի զինվորական համակարգը, իսկ ժողովուրդն էլ, հեղափոխության արդյունքից դժգոհ, երկփեղկվել, բաժանվել է երկու մասի՝ հեղափոխական նորի եւ հակահեղափոխական հնի... եւ պահը հարմար գտնելով, սկսեցին Իրաքի հարձակումը, որը 8 տարի տեւեց: Իրաքի այդ նույն ղեկավարներն անցյալ տասնամյակների ընթացքում երբեք ու երբեք չհամարձակվեցին նույնիսկ հարձակման նշույլներ ցույց տալ: Որովհետեւ Իրանի ժամանակի ղեկավարությունը միշտ բարձր էր պահում երկրի ռազմական պատրաստվածության մակարդակը:

Իսկ մեր երկրի նորաթուխ իշխանավորները, անգիտանալով վերը նշված ճշմարտությունների մասին, ապիկար քաղաքականությամբ ու անհեռատես քայլերի պատճառով մեր դեմ հրահրեցին աղետալի մի պատերազմ, որն ավարտվեց նվաստացուցիչ հետեւանքներով: Նախ, անմտորեն ժողովրդին հնի ու նորի բաժանեցին, հետո էլ, հեշտությամբ տեր կանգնելով հների թողած ժառանգությանը, էժանագին ամբոխավարությամբ, Արցախի հրապարակում բարձրաձայնեցին «Արցախը Հայաստան է, եւ վերջ» կարգախոսը, որով ավելի թեժացրին թշնամի հարեւանի կրքերը: Այդ երկրի ու նրա զինակցի խորամանկ ղեկավարի համար դժվար չէր հասկանալ, որ այդ խոսքերի տերը, ռազմական ինքնաթիռի ղեկին նկարահանվելուց բացի, ուրիշ բան չգիտի՝ ոչ քաղաքականության եւ ոչ էլ պատերազմական գործողությունների մասին: Նրանց բնորոշմամբ՝ «նա ընդամենը միջին մակարդակի մի լրագրող է, ու վերջ...»: Այդպիսով ամեն ինչ պատրաստ էր պատերազմ սկսելու համար, հատկապես որ պատրվակն էլ հնչած էր...

Այդ ամենից հետո, մոռացության տալով իրենց մոտ անցյալի ավերիչ արարքներն ու աղետաբեր քայլերը, խաղաղասիրության պատմուճան են հագել ու ժողովրդին սպառնում են՝ ասելով, որ եթե իրենք չլինեն, պատերազմ կլինի... Այս կարգի ահաբեկումներով ընտրարշավի դուրս գալը ոչ այլ ինչ է, քան տկարության դրսեւորում: Իզուր են ժողովրդի աչքին թոզ փչում. սրանք պատերազմի ժամանակ ոչ գերագույն գլխավոր հրամանատար եղան եւ ոչ էլ կարող են խաղաղության աղավնի դառնալ...

Վահան ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 16.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

12-13 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՃԻՇՏ ՍԻՄՎՈԼԻԿԱ ԿԸՆՏՐԵՆ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը եւ իշխող թիմը շարունակում են սպառնալ պատերազմով եւ միեւնույն ժամանակ խոսել խաղաղության մասին: ՔՊ-ական այս թիմն այնքան է դերի մեջ մտել եւ այնքան է հավատում այն գաղափարին, որ պատերազմի վախը կարող է մարդկանց ստիպել քվեն իրենց տալ, որ անգամ իրենց նախընտրական լոգոտիպը նվիրել են խաղաղության կեղծ թեզին: Նիկոլ Փաշինյանը դեռ նախընտրական պրոցեսներից առաջ էր ֆեյսբուքյան լայվերի միջոցով սրտիկներ ուղարկում իր հետեւորդներին, եւ հենց այդ սրտիկը դարձավ ՔՊ կուսակցության ընտրական սիմվոլիկան:

Անամպ կապույտ երկինք, սրտիկ եւ խաղաղություն, ինչ ազդեցություն են թողնում այս պատկերները հայ հասարակության վրա: Ի վերջո, հայ տղամարդու կերպարը սրտիկներ ուղարկող տղամարդու կերպարին համապատասխանո՞ւմ է՝ հարցրինք հոգեբան **Միհրդատ Մադաթյանին**: Նա, խոսելով թեմայի մասին, ասաց. «Երբ մենք խոսում ենք այդ լոգոտիպի մասին, չենք կարող չնկատել, որ այն լրիվ մանկական է: Ըստ իս՝ դրա վրա ոչ թե դիզայներներ են աշխատել, այլ հենց Փաշինյանն ինքն է աշխատել՝ սրտիկներ է նկարել, կապույտ երկինք: Այդ անհամաչափ մատներով նկարված սրտիկները նկարչությունից քիչ թե շատ գլուխ հանող մարդը չէր կարող նկարել: Այդ սրտիկային իրավիճակը Փաշինյանն է ստեղծել՝ որպես ՔՊ-ի սիմվոլիկա: Այն հասուն մարդուն բնորոշ քայլ չէ: Մոտեցումը փաստում է այս մարդու մակերեսայնության մասին: Այդ սրտիկի տակ գրված «խաղաղությունը» որեւէ կապ չունի իրական խաղաղության հետ, անամպ երկինքը ոչ մի կապ չունի Հայաստանի երկնքի հետ: Սիրտը սովորաբար եղել է սիրո սիմվոլիկա, բայց այն ատելության մթնոլորտը, որ այժմ տիրում է Հայաստանում, աննախադեպ է, երբեք այսպիսի ատելության մթնոլորտ չի տիրել մեր երկրում: Մեր հազարամյակների պատմության ընթացքում հայ ժողովուրդը երբեք իրար այսքան չի ատել, ատելության շեմը հասել է աննախադեպ չափերի: Պատմագիրներն անպայման կգրեին, եթե այսպիսի ատելության մթնոլորտ տիրեր մեր երկրում: Խաղաղության մասին են խոսում, բայց Հայաստանն այժմ կիլոմետրերով հեռու է խաղաղությունից: Նույնիսկ ՔՊ-ի կոմպանիոնը՝ Ալիեւն է ասում, որ խաղաղություն չի լինելու, որ «Արեւմտյան Ադրբեջանի» հարց ունեն լուծելու եւ այլն: Եվ, առհասարակ, խաղաղությունն Իլհամի հրահանգով Սահմանադրության փոփոխությունն է: 12-13 տարեկան երեխաներին եթե հանձնարարեն՝ վերջին զանգի սիմվոլիկա ընտրել, երեւի ավելի ճիշտ ընտրություն կկատարեն, քան Փաշինյանը»:

Հայկական PR ասոցիացիայի նախագահ, ԵՊՀ դոցենտ **Աստղիկ Ավետիսյանն** էլ, խոսելով թեմայի մասին, ասաց. «Այս վիզուալը՝ ձեռքերի միջոցով ձեւավորված սիրտը, նարնջագույնի անցումով կապույտ ֆոնի վրա, ներկայացվում է որպես սիրո եւ միասնության պարզ նշան: Սակայն իրականում այն դասական քաղաքական տեխնոլոգիա է. կարմիրի «կոշտ» եւ պատասխանատվություն պահանջող իմաստը փոխարինվում է նարնջագույնի ավելի մեղմ՝ «անվտանգ» երանգով, իսկ կապույտը ստեղծում է վստահության եւ կայունության պատրանք: Արդյունքում ձեւավորվում է հարմարավետ, էմոցիոնալ միջավայր, որտեղ բարդ հարցերը դուրս են մղվում: Այս սիմվոլիկ լեզուն կտրուկ հակադրվում է Նիկոլ Փաշինյանի խոսույթին, որտեղ առկա են ագրեսիա, պիտակավորում եւ հասարակության բեւեռացում: Ստացվում է երկակի հաղորդակցություն. պատկերներում՝ սեր եւ միասնություն, խոսքում՝ դիմակայություն եւ բաժանում: Ութ տարվա կառավարման արդյունքում, երբ ակնկալվում են հաշվետվողականություն եւ հստակ արդյունքների ներկայացում, նման սիմվոլներն ու կարգախոսներն ավելի շատ հիշեցնում են իրական խնդիրներից ուշադրություն շեղելու փորձ: Սա ոչ թե սովորական հաղորդակցություն է, այլ՝ արհեստական, կեղծ նարատիվների կառուցում, որտեղ ձեւը փոխարինում է բովանդակությանը, իսկ պատասխանատվությունը՝ էմոցիոնալ էֆեկտին»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am